Organization for Security and Co-operation in Europe
Office in Yerevan

ansa
Armenian National Students' Association

ԲՈԼՈՆՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ՈՒՍԱՆՈՂԻ ԱՉՔԵՐՈՎ

Organization for Security and Co-operation in Europe
Office in Yerevan

Բոլոնյան համակարգն ուսանողի աչքերով

Ուսումնասիրության զեկույց

Երևան 2015թ.

Սույն ուսումնասիրությունը կատարվել է ԵԱՀԿ Երևանի գրասենյակի աջակցությամբ՝ Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիայի կողմից:

Ուսումնասիրությունը կազմակերպել և իրականացրել են.
1. Սարգիս Ասատրյանցը
2. Արմինե Յարալովան
3. Գոհար Հովհաննիսյանը
4. Անի Ա. Բաղդասարյանը

Ձեկույցը խմբագրվել է փ.գ.թ. Ավետիք Մեջլումյանի կողմից:

Ուսումնասիրության մեջ ամփոփված են հեղինակների տեսակետները, որոնք կարող են չհամընկել ԵԱՀԿ-ի կամ ԵԱՀԿ Երևանի գրասենյակի տեսակետների հետ:

ISBN # 978-92-9235-107-6

Առանց սահմանների Եվրոպական կրթական տարածաշրջանի կառուցումը արդեն ավելի քան տասնամյակ յուրաքանչյուր գիտակից քաղաքացու տեսլականն է դարձել: Այնուամենայնիվ, հաշվի առնելով Եվրոպայում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական մի շարք երևույթներ, որոշակի բացթողումներ ենք տեսնում այդ համակարգում: Եվրոպացի ուսանողները Բոլոնյան կրթական համակարգի ներդրման պահից ի վեր աջակցում են ընդհանուր բարձրագույն կրթական տարածաշրջանի գաղափարի կայացմանը, թեպետ և անընդհատ բախվում են դժվարությունների, սահմանափակումների և համակարգի կայացման ձախողումների:

Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիան (ՀՈՒԱԱ) լինելով ազգային մակարդակում ամենախոշոր ուսանողական ներկայացուցչական մարմինը, ձեռնամուխ է եղել Հայաստանում բոլոնյան համակարգից ուսանողների հնարավորինս լայն շրջանակի տեղեկացվածության մակարդակի գնահատմանը, ինչպես նաև ուսանողների վերաբերմունքի բացահայտմանը վերջինիս նկատմամբ:

Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության Երևանի գրասենյակի բարձր հովանու ներքո հնարավոր դարձավ բարձրագույն կրթության ոլորտի շահակիցների լայն շրջանակներին ներկայացնել ուսանողների տեսակետը Հայաստանում արդեն մեկ տասնամյակ իրականացվող բարձրագույն կրթական բարեփոխումների վերաբերյալ:

Շնորհակալություն ենք հայտնում հետազոտությանը աջակցած բոլոր պետական, ազգային, միջազգային կազմակերպություններին, բարձրագույն ուսումնական հաստատությունների անձնակազմերին, հետազոտությանը կամավորականության սկզբունքով և հասարակական հիմունքներով մասնակցած բոլոր ուսանողներին, հետազոտության կոորդինատորներին:

Շնորհակալ ենք մեր հետազոտական աշխատանքի նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերելու նկատմամբ և հուսով ենք, որ դուք հետաքրքիր և ամբողջական պատկեր կստանաք հետազոտության թեմայի վերաբերյալ:

Հարգանքով՝ Հայաստանի ուսանողական
ազգային ասոցիացիա

Բովանդակություն

Նախաբան **5**

Հետազոտության մեթոդաբանությունը **8**

Տվյալների հավաքագրման մեթոդները 8

Ընտրանքի կառուցվածքն ու հիմնավորումը 8

Տվյալների վերլուծության մեթոդները 11

Բոլոնյան համակարգն ուսանողների աչքերով **12**

1. Տեղեկացվածություն և կարծիքներ բոլոնյան համակարգի մասին 12
2. Եռաստիճան կրթական համակարգ 20
3. Կրթական շարժունություն 24
4. Սոցիալական ընդգրկվածություն 26
5. Ուսանողակենտրոն ուսուցում 29
6. Կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգ 35
7. Որակի ապահովման գործընթաց 39
8. Հարատև ուսումնառություն 40
9. Հեռանկարներ 41

Ամփոփում **45**

Առաջարկություններ **49**

Օգտագործված գրականության ցանկ **50**

Հավելվածներ **52**

Նախաբան

Ցանկացած երկրի կայունության ու զարգացման հիմնասյուներից է արդյունավետորեն գործող և իր գործառույթներն իրականացնող կրթական համակարգի ստեղծումն ու ապահովումը: Այսօր ողջ աշխարհում լավագույն կրթական համակարգի որոնման ճանապարհին են թե՛ զարգացած, թե՛ զարգացող երկրները, քանի որ ներկայիս կյանքի սրընթաց դինամիկայի պայմաններում ամեն մի համակարգ իր շոշափելի արդյունքները տալու համար պետք է հարմարվի այդ փոփոխություններին:

Վերոնշյալ խնդիրը հատկապես տեսանելի ու շոշափելի է Հայաստանի Հանրապետության կրթական համակարգի համար, քանի որ կրթական համակարգի զարգացումը գիտելիքահեն տնտեսության կերտման անվիճելի գրավականն է համարվում: Այսօր որպես այդ խնդրին որոշակիորեն լուծում տալու միջոց ընտրվել է Բոլոնյան կրթական համակարգը, որն իր արդյունավետ կիրառելիությունն ապացուցել է եվրոպական տարբեր երկրներում: Սակայն կարևոր է նաև հասկանալ, թե արդյոք եվրոպական զարգացած երկրներում արդյունավետորեն գործող կրթական համակարգը հավասարապես արդյունավետ է գործում նաև Հայաստանի Հանրապետությունում:

Բարձրագույն կրթության եվրոպական տարածքի հիմնադրման հիմքում ընկած է *բարձրագույն կրթության որակը:* Բարձրագույն կրթության համակարգում էական նշանակություն ունի որակի ապահովումը և դրա արդյունավետ մեխանիզմների մշակումը, գործարկումը, վերահսկողությունն ու գնահատումը: Տարբեր կրթական հաստատություններ իրենց կողմից տրամադրվող կրթության որակն ապահովում են ներքին կամ արտաքին (կամ՝ երկուսը միաժամանակ) մեխանիզմների միջոցով: Առաջադեմ կրթական հաստատությունները հավասարապես օգտագործում են որակի ապահովման թե՛ ներքին, թե՛ արտաքին մեխանիզմներ:

Որակի ապահովումն իրականացվում է բարձրագույն կրթական հաստատությունների, ազգային կրթական համակարգերի և որակի գնահատման միջազգային գործակալությունների կողմից համատեղ մշակված ընթացակարգերի միջոցով: Կրթության որակը մեծապես կախված է ակադեմիական անկախությունից, ակադեմիական ու գիտական գործունեությունից և մրցակցությունից: Այս գործընթացը կարող է հաջողել միայն այն պարագայում, եթե հաշվի է առնում տվյալ կրթական հաստատության ինստիտուցիոնալ մշակույթի առանձնահատկությունները: Այդ ներքին մշակույթն է խթանում համապատասխան մոտիվացիան և նպաստում որակի ապահովման մեխանիզմների արդյունավետությանը:

Որակի ապահովման մեխանիզմների արդյունավետության համար անհրաժեշտ է հետևյալ տարրերի առկայությունը՝

- Որակի ապահովման գործակալություններ,
- Թափանցիկ և ճշգրիտ չափորոշիչներ ու սպասելիքներ,
- Ակադեմիական կամ կրթական հաստատության կողմից կատարված, սեփական որակի ապահովման վերաբերյալ ուսումնասիրություններ և ինքնագնահատում (որակի գնահատման տարբեր գործակալություններ և կրթական հաստատություններ տարբեր մոտեցումներ ունեն այն հարցում, թե արդյոք ամբողջ հաստատությունը պետք է գնահատվի, թե՝ առանձին ծրագրերն ու ստորաբաժանումները),
- Արտաքին ուսումնասիրություններ այցելող փորձագետների կողմից,

- Գրավոր երաշխավորագրեր,
- Հանրային հաշվետվողականություն[1]:

Եվրոպական նախարարները պարտավորվել են կրթական հաստատությունների ազգային և եվրոպական մակարդակներում նպաստել որակի հետագա բարելավմանը: Կարևորվում է որակի ապահովման փոխադարձ համաձայնեցված չափանիշներ և մեթոդներ մշակելու պահանջը:

Ուսանողների, դասախոսների, հետազոտողների և կրթական վարչակազմի *շարժունությունը* Բարձրագույն կրթության եվրոպական տարածքի կառուցման հիմքն է: Նախարարները շեշտում են դրա կարևորությունը ոչ միայն գիտական և մշակութային, այլ նաև քաղաքական, հասարակական և տնտեսական ոլորտներում: Նրանք բավարարվածությամբ նշում են, որ նախարարների հանդիպումների միջև ընկած ժամանակահատվածներում շարժունությունը աճում է, իհարկե՝ նաև Եվրամիության աջակցության ծրագրերի շնորհիվ: Նրանք նաև անհրաժեշտ են համարում քայլեր ձեռնարկել՝ ուսանողների շարժունության ավելացման և որակի բարելավման ուղղությամբ:

Նախարարները շեշտում են *Եվրոպական կրեդիտային փոխանցման համակարգի* կարևորությունը ուսանողների շարժունության դյուրացման և միջազգային ուսումնական ծրագրերի զարգացման գործում: Եվրոպական կրեդիտային փոխանցման համակարգը դառնում է ազգային կրեդիտային համակարգի ընդհանրացված հիմքը:

Կարևորվում է *կրթական որակավորումների փոխճանաչումը և համեմատելի կրթական աստիճանների համակարգի վավերացումը:* Նախարարներն ընդգծում են Լիսաբոնի կոնվենցիայի կարևորությունը, որը պետք է վավերացվի Բոլոնիայի գործընթացի մասնակից բոլոր երկրների կողմից: Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ծառայությունների ցանցին՝ ENIC/NARIC-ին, կոչ է արվում ազգային իշխանությունների հետ համատեղ աջակցել Կոնվենցիայի իրականացմանը:

Նախարարները ողջունում են նաև *բարձրագույն կրթության հաստատությունների և ուսանողների մասնակցությունը Բոլոնիայի գործընթացին*՝ նշելով, որ հաջողության գրավականը կրթական գործընթացի բոլոր մասնակիցների ներգրավվումն է:

Կարևորվում է *բարձրագույն կրթության եվրոպական ուղղվածության ներմուծումը:* Նախարարները նշում են, որ ի պատասխան Պրահայում արված կոչին՝ մշակվում են եվրոպական ուղղվածությամբ ու կառուցվածքով լրացուցիչ մոդուլներ, դասընթացներ և ուսումնական ծրագրեր:

Շեշտադրվում է *բարձրագույն կրթության Եվրոպական տարածքի գրավչության զարգացումը:* Նախարարները ձգտում են ամրապնդել Բարձրագույն կրթության եվրոպական տարածքի գրավչությունն ու մատչելիությունը: Նրանք պատրաստ են տրամադրել կրթաթոշակներ երրորդ աշխարհի երկրների ուսանողներին:

Նախարարները կարևորում են բարձրագույն կրթության հնարավորությունը՝ իրականացնելու *հարատև կրթություն:* Նրանք քայլեր են ձեռնարկում հարատև կրթության միասնական քաղաքականություն վարելու ուղղությամբ և խրախուսում են բարձրագույն կրթական հաստատություններին ու դրան առնչվող բոլոր կազմակերպություններին՝ մեծացնելու հարատև կրթության հնարավորությունները բարձրագույն կրթության համակարգում, ներառյալ՝ նախորդ կրթության ճանաչումը: Նրանք

[1] Դասախոսների որակավորման բարձրացման միջոցառումների որակն ու արդյունավետությունը (ԵՊՀ օրինակով), Ա. Անափիոսյան, Հ. Հովհաննիսյան, Ա. Մեջլումյան, Երևան, 2015:

շեշտում են, որ նման գործողությունները պետք է բարձրագույն կրթական գործընթացի անբաժան մասը կազմեն[2]:

Հայաստանը, 2005 թվականից անդամակցելով Բոլոնյան գործընթացին, ձեռնամուխ է եղել կրթության և հատկապես բարձրագույն կրթության ոլորտում մի շարք արմատական բարեփոխումների իրականացմանը: Այսօր բարձրագույն կրթության ոլորտի պատասխանատուներն անընդհատ մատնանշում են համակարգի արդյունավետ ներդրման կարևորությունը և փաստում են, որ Հայաստանում այդ գործընթացն իրականացվում է բավարար մակարդակով:

Այնուամենայնիվ, ինչպես վկայում են մի շարք հետազոտություններ և փորձագետներ, ուսանողների տեսանկյունը հարցի վերաբերյալ մի փոքր այլ է: Բոլոնյան գործընթացի արդեն տասնամյա պատմությանը նրա կարևորագույն շահառուների՝ ուսանողների նետած հայացքը վկայում է այն մասին, որ բավական թերություններ կան համակարգի ներդրման գործընթացում: Այս առումով, պահանջված է կարծիքի հետազոտության իրականացումը, որը կբացահայտի ուսանողների տեսակետները Հայաստանում Բոլոնիայի գործընթացի և դրա ակտուալ հիմնախնդիրների վերաբերյալ:

«Բոլոնյան համակարգն ուսանողի աչքերով» հետազոտությունը նպատակ ունի, Հայաստանի ուսանողության հնարավոր լայն հատվածի կարծիքը հաշվի առնելով, ներկայացնելու վերջինիս վերաբերմունքը Հայաստանում Բոլոնյան համակարգի ներդրման, Բոլոնյան գործընթացի արդի վիճակի և հիմնախնդիրների նկատմամբ:

[2] Բեռլինի կոմյունիկե, «Բարձրագույն կրթության Եվրոպական տարածքի կառուցումը», Եվրոպայի բարձրագույն կրթության համար պատասխանատու նախարարների համատեղ հռչակագիր, սեպտեմբերի 19, 2003թ., Բեռլին:

Հետազոտության մեթոդաբանությունը

Տվյալների հավաքագրման մեթոդները

«Բոլոնյան համակարգն ուսանողի աչքերով» հետազոտությունը նպատակ ունի բացահայտելու ուսանողների տեղեկացվածության աստիճանը և վերաբերմունքը ՀՀ-ում իրականացվող կրթական բարեփոխումների վերաբերյալ:

Հետազոտության իրականացման համար ընտրվել է քանակական հարցման մեթոդը՝ ձևայնացված հարցաթերթի միջոցով: Այդ նպատակով կազմվել է 104 հարցից բաղկացած հարցաթերթ, որտեղ հարցերը բաշխվել են յոթ բաժիններում՝ ըստ Բոլոնյան համակարգի առանցքային դրույթների.

- Եռաստիճան կրթական համակարգի մասին,
- Կրթական շարժունության մասին,
- Սոցիալական ընդգրկվածության մասին,
- Ուսանողակենտրոն ուսուցման մասին,
- Կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգի մասին,
- Որակի ապահովման գործընթացի մասին,
- Հարատև ուսումնառության մասին:

Հարցաթերթը Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիան (ՀՈՒԱԱ) ներկայացրել է Բարձրագույն կրթության որակի ապահովման ազգային կենտրոն (ՈԱԱԿ), Կրթության և գիտության նախարարություն և միջազգային փորձագետների: Նրանց արձագանքների հիման վրա հարցաթերթը լրամշակվել ու խմբագրվել է:

Հարցումն իրականացվել է դեմ առ դեմ հարցազրույցների մեթոդով:

Հետազոտությունն իրականացվել է 2014թ. հոկտեմբեր - 2015թ. ապրիլ ժամանակահատվածում:

Ընտրանքի կառուցվածքն ու հիմնավորումը

Ընտրանքի ճշգրտությունն ապահովելու համար ՀՈՒԱԱ և ԵԱՀԿ ներկայացուցիչները կապ են հաստատել Կրթության և գիտության նախարարության և հայաստանյան բոլոր բուհերի հետ՝ ուսանողների թվի վերաբերյալ վիճակագրական տեղեկություններ ստանալու նպատակով: ԿԳՆ-ն և հայաստանյան բուհերը աջակցել են հետազոտության իրականացմանը՝ տրամադրելով տեղեկություններ ուսանողների թվի վերաբերյալ՝ ըստ կրթության աստիճանի (բակալավրիատ, մագիստրատուրա, ասպիրանտուրա) և ըստ բուհերի (պետական, միջպետական, ոչ պետական):

Հետազոտության գլխավոր համախմբությունը կազմել է 108.880 ուսանող: Ընտրանքային համախմբությունը կազմել է 1723 ուսանող: Ընտրանքի այս ծավալի պարագայում սխալի հավանականությունը 2.8% է, իսկ վստահության միջակայքը՝ 99%: Այս ցուցանիշներն ապահովում են ընտրանքի ներկայացուցչականությունը և թույլ են տալիս ակնկալել կատարված եզրահանգումների բարձր հավաստիություն:

Կիրառվել է ստրատիֆիկացված (բազմաստիճան) պատահական ընտրանք: Ընտրանքի առաջին աստիճանում ուսանողների թիվը, ըստ տոկոսային հարաբերակցության, բաժանվել է պետական, ոչ պետական և միջպետական բուհերի, այնուհետև նույն տոկոսային հարաբերակցությամբ տարածվել է ընտրանքային համախմբության

վրա (1723): Ընտրանքում ներառվել են պետական և միջպետական բոլոր բուհերը, իսկ ոչ պետականներից ընդգրկվել են երկու բուհեր: Ընդհանուր առմամբ, հետազոտությունն ընդգրկել է 37 հայաստանյան բուհ:

Նախքան հետազոտության մեկնարկը կապ է հաստատվել բոլոր բուհերի ռեկտորների հետ, ստացվել է նրանց համաձայնությունը հարցումն անցկացնելու համար: Հայաստանի ազգային ագրարային համալսարանում և Կրթության միջազգային ակադեմիայում (Երևանի «Հայբուսակ» համալսարան) հարցումներ չեն իրականացվել, քանի որ վերջիններս հրաժարվել են մասնակցել հետազոտությանը: Այս պատճառով, ընտրանքում ընդգրկվել է Եվրասիա միջազգային համալսարանը:

Հարցվողների 31%-ը արական սեռի ներկայացուցիչներ են, 69%-ը՝ իգական: Ընտրանքն իրականացնելիս հարցվողների սեռի քանակական սահմանափակում չէր դրվել և հիմք էր ընդունվել համաչափության պահպանման սկզբունքը: Իգական և արական սեռի ներկայացուցիչների մասնակցային չափի կտրուկ տարբերության հիմնական պատճառն այն է, որ արական սեռի հարցվողների շրջանում ավելի շատ են գրանցվել հարցումից հրաժարվելու դեպքեր, իսկ հարցազրույցների ընթացքում՝ «անպատասխանատու», հարցերին անլուրջ մոտենալու վարքագիծ (ինչի պատճառով այդ հարցաթերթերը խոտանվել են):

Հարցմանը մասնակցածների 28%-ը անվճար, իսկ 72%-ը վճարովի ուսուցման համակարգում ընդգրկված ուսանողներ են:

Ըստ բուհերի, ընտրանքը հետևյալ բաշխումն է ունեցել.

Աղյուսակ 1. Հետազոտության ընտրանքն ու բաշխումն ըստ բուհերի

	Հաճախակա-նություն	**%**
Պետական բուհեր		
Երևանի պետական համալսարան	309	17.9
Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարան	188	10.9
Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան	65	3.8
Հայաստանի պետական ագրարային համալսարան /Վանաձորի մասնաճյուղ, Սիսիանի մասնաճյուղ/	14	0.8
Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա	18	1
Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ	19	1.1
Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան	61	3.5
Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան	111	6.4
Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա	33	1.9
Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան	140	8.1
ՀՀ պետական կառավարման ակադեմիա	10	0.6

	Հաճախակա-նություն	%
Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ	47	2.7
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան	154	8.9
Վանաձորի պետական համալսարան	59	3.4
Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտ	116	6.7
Գորիսի պետական համալսարան	31	1.8
Գավառի պետական համալսարան	41	2.4
Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Վանաձորի մասնաճյուղ	9	0.5
Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Կապանի մասնաճյուղ	5	0.3
ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ	28	1.6
ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղ	15	0.9
ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղ	2	0.1
ԵՊԿ Գյումրու մասնաճյուղ	3	0.2
ԵԹԿՊԻ Վանաձորի մասնաճյուղ	3	0.2
ԵԹԿՊԻ Գյումրու մասնաճյուղ	3	0.2
Միջպետական բուհեր		
Հայաստանում ֆրանսիական համալսարան	17	1
Հայ-ռուսական սլավոնական համալսարան	48	2.8
Հայաստանի ամերիկ յան համալսարան	21	1.2
Ոչ պետական բուհեր		
Երևանի հյուսիսային համալսարան	113	6.6
Եվրասիա միջազգային համալսարան	40	2.3
Ընդամենը	**1723**	**100**

Ընտրանքի երկրորդ աստիճանում ընտրանքային համախմբությունը բաժանվել է բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի խմբերի՝ համաձայն բուհերի տրամադրած տեղեկությունների:

Ֆակուլտետները նախապես դասակարգվել են ըստ ուղղվածության (օրինակ՝ հումանիտար, հասարակագիտական, բնագիտական, և այլն): Դրանցից, պատահական թվերի գեներատորի միջոցով, ընտրվել են մի շարք ֆակուլտետներ: Նույն սկզբունքով, պատահականորեն ընտրվել են նաև մասնագիտացումներն ու կուրսերը:

Հարցվողների ընտրության համար ընտրանքային քայլ է սահմանվել 3-ը, այսինքն՝ ընտրվել են կուրսի մատյանի առաջին, 4-րդ, 7-րդ և ըստ 3-ական քայլի՝ հաջորդող ուսանողները: Ընտրված մասնակիցների՝ տեղում չլինելու կամ մասնակցել

չցանկանալու դեպքում ընտրանքային քայլին գումարվել է 1, այսինքն՝ ընտրվել են յուրաքանչյուր 2-րդ, 4-րդ, 8-րդ մասնակիցները, և այդպես շարունակ:

Տվյալների վերլուծության մեթոդները

- ✓ Հարցաթերթում առկա բաց հարցերի պատասխանները կոդավորվել են,
- ✓ Ստացված տվյալների վերլուծությունը կատարվել է SPSS վիճակագրական փաթեթի միջոցով:

Որակի վերահսկման մեխանիզմներ

Հետազոտության որակի վերահսկողության նպատակով իրականացվել են հետևյալ քայլերը.

- ✓ Անցկացվել է պիլոտային հետազոտություն, որի արդյունքների հիման վրա շտկվել են հարցաթերթում առկա թերությունները,
- ✓ Աշխատաժողովներ են անցկացվել 15 հարցազրուցավարների հետ, որոնց մանրամասն ներկայացվել է հարցազրույցների անցկացման և հարցաթերթի լրացման տեխնիկան և էթիկայի կանոնները,
- ✓ Հարցազրույցների որակը գնահատելու համար ծրագրի պատասխանատուն յուրաքանչյուր հարցազրուցավարի հետ մասնակցել է 1 փորձնական հարցազրույցի,
- ✓ Հարցազրուցավարներին տրամադրվել է հարցաթերթի լրացման ուղեցույց,
- ✓ Հարցազրուցավարների խմբերի հետ աշխատել են 4 համակարգողներ, որոնք պատասխանատու են եղել դաշտային աշխատանքների վերահսկման համար,
- ✓ Համակարգողները վերահսկել են նաև տվյալների մուտքագրման ընթացքը, իսկ մինչ մուտքագրումը հարցաթերթերը ենթարկվել են տրամաբանական վերլուծության և ուշադրություն է դարձվել «հարց-թակարդների» պատասխանների վրա:

Բոլոնյան համակարգն ուսանողների աչքերով

1. Տեղեկացվածություն և կարծիքներ բոլոնյան համակարգի մասին

Հայաստանի բարձրագույն կրթական համակարգը ներկայումս գտնվում է բարեփոխումների չափազանց կարևոր փուլում: Բազմաթիվ հարցեր են բարձրաձայնված, որոնք դեռևս չեն գտել իրենց պատասխանները. արդյո՞ք բոլոնյան գործընթացը դեռևս արդիական է, ինչպե՞ս կարելի է հասնել այդ գործընթացի բոլոր ասպեկտների արդյունավետ ներդրմանը Հայաստանում: Ակնհայտ է, որ համակարգի ներդրումից 10 տարի անց դեռևս ակտուալ են նույնիսկ հիմնարար համարվող՝ աստիճանների փոխճանաչման գործընթացի թերացումներ ու ձախողումներ: Հետազոտության այս հատվածում կփորձենք ներկայացնել բոլոնյան համակարգի վերաբերյալ ուսանողների ընկալումներն ու տեղեկացվածության ընդհանուր պատկերը:

Հարցմանը մասնակցած ուսանողների 78%-ը տեղյակ է իրենց բուհում գործող բոլոնյան համակարգի մասին: Ուսանողների 22%-ի կարծիքով, բոլոնյան համակարգը կամ չի գործում իրենց բուհում, կամ տեղյակ չեն դրա մասին:

Ընդ որում, կրթական առավել բարձր աստիճաններում (մագիստրատուրա) համակարգի վերաբերյալ ուսանողների իրազեկվածության մակարդակն ավելի բարձր է: Եթե բակալավրիատի ուսանողների շրջանում հարցվածների 75%-ն է իրազեկված համակարգի վերաբերյալ, ապա մագիստրատուրայում իրազեկված ուսանողների համամասնությունն ավելի բարձր է՝ 82%: Ասպիրանտուրայում սովորողների շրջանում այս ցուցանիշը կազմում է 85%:

Տարբերություն է նկատվում նաև բակալավրիատի տարբեր կուրսերում սովորող ուսանողների տեղեկացվածության աստիճանի միջև: Այսպես, բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանողների շրջանում բոլոնյան համակարգի մասին իրազեկվածությունը կազմում է 82.8%, մինչդեռ առաջինից մինչև 3-րդ կուրսերի ուսանողների շրջանում այդ ցուցանիշն առավելագույնը 77%-ի է հասնում:

Այս հարցում էական տարբերություն է նկատվում նաև մագիստրատուրայի տարբեր կուրսների միջև: Եթե մագիստրատուրայի առաջին կուրսում տեղեկացվածության ցուցանիշը 70.8% է, ապա 2-րդ կուրսում զգալիորեն բարձր է՝ 89.7%:

Հատկանշական է, որ ուսանողների իրազեկվածության առումով էական տարբերություն չի նկատվում մարզային և երևանյան բուհերի միջև (Հավելված 1):

Անդրադառնալով բոլոնյան համակարգի մասին իրազեկման ուղիներին՝ հարցվողների 60%-ը մատնանշել է ներբուհական աղբյուրները: Դրանց շարքում որպես առաջնային աղբյուրներ նշվել են բուհի կողմից ուղղակիորեն տրամադրվող տեղեկատվությունը (18%), դասախոսի կողմից տրամադրվող տեղեկատվությունը (15%) և բուհում ընթացող տարատեսակ քննարկումները (13%): Հետաքրքիր է, որ իրազեկման գործում համեմատաբար թույլ է ուսանողական խորհուրդների դերը. ընդամենը 9%: Իսկ տեղեկատվության արտաբուհական աղբյուրների շարքում առաջնահերթ նշանակություն ունի համացանցը (21%):

Մտահոգիչ է այն հանգամանքը, որ հարցված ուսանողներից ոչ ոք չի նշել բոլոնյան համակարգի մասին հատուկ գրականություն ուսումնասիրելու մասին: Այս փաս-

տը կարող է վկայել և՛ նման գրականության բացակայության, և՛ դրա անմատչելիության ու ոչ գրավչության մասին:

Հատկանշական է նաև ԿԳՆ և ՈԱԱԿ-ի պասիվ դերը ուսանողների իրազեկման հարցում: Հարցված ուսանողները չեն նշել նաև ավագ դպրոցում իրենց իրազեկման մասին:

Գծապատկեր 1. Բոլոնյան համակարգի վերաբերյալ ուսանողների տեղեկացվածության հիմնական աղբյուրները



Թեև ստացված տեղեկատվությունը ուսանողների մեծ մասը համարում է բավարար կամ մասամբ բավարար (67%), սակայն յուրաքանչյուր 3-րդ հարցվողը կամ 33%-ը նշել է, որ այդ տեղեկատվությունը անբավարար է:

Հետաքրքիր է, որ բոլոնյան համակարգի մասին տրամադրվող տեղեկատվությունը մարզերի ուսանողության 25%-ն է համարում բավարար, մինչդեռ մայրաքաղաքի ուսանողության 18.6%-ն է նշել դրանից իր բավարարվածության մասին: Այս տարբերությունը միանշանակ վկայությունը չէ այն բանի, որ մարզերում տեղեկատվությունն ավելի հասանելի է կամ ավելի ամբողջական: Հնարավոր է, Երևանի ուսանողների պահանջներն այս հարցում ավելի բարձր են, հետևաբար, բավարարվածության մակարդակն էլ՝ ավելի ցածր:

Մագիստրատուրայի ուսանողների շրջանում շուրջ 3%-ով ավելի բարձր է այն հարցվողների տեսակարար կշիռը, որոնք բավարարված են բոլոնյան համակարգի մասին տրամադրվող տեղեկատվությամբ:

Բավական հետաքրքիր են բոլոնյան համակարգի էության վերաբերյալ ուսանողների ընկալումները, որոնք ներկայացված են հաջորդ գծապատկերում: Ընդ որում, ուսանողների մոտ 14%-ը դժվարացել է պատասխանել այս հարցին:

Գծապատկեր 2. Բոլոնյան համակարգի էությունն ըստ ուսանողների (%)



Ստորև ներկայացված են բոլոնյան համակարգի վերաբերյալ այն ընկալումները, որոնց հանդիպման հաճախականությունը չի գերազանցել պատասխանների 1%-ը.

- Եվրոպական միջազգային համակարգ - 0.7%
- Աշխատանքի և ուսման համատեղելիություն - 0.5%
- Մրցակցություն - 0.5%
- Ինտերակտիվ դասեր, նոր մեթոդներ - 0.7%
- Լեզուների իմացության պահանջ - 0.4%
- Ուսանողների մոտիվացիա - 0.1%

Ակնհայտ է, որ բոլոնյան համակարգը հայաստանցի ուսանողների պատկերացմամբ հավասարեցվում է կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգին: Սա էլ իր հերթին ընկալվում է որպես զուտ բալային գնահատման համակարգ: Մեծ է նաև այն ուսանողների թիվը, որոնք բոլոնյան համակարգը նույնացրել են որակի ապահովման և ուսանողակենտրոն ուսուցման հետ: Վերջապես, աննշան է այն ուսանողների թիվը, ովքեր բոլոնյան համակարգը նկարագրել են ըստ իր առանցքային բաղադրիչների:

Ուսանողները գնահատել են նաև բոլոնյան համակարգի ազդեցությունը Հայաստանի կրթական համակարգի վրա:

Գծապատկեր 3. Բոլոնյան գործընթացի ազդեցությունը կրթական համակարգի վրա (%)



Գծապատկերում ներկայացված առաջին դատողության առնչությամբ գերակշռող է այն տեսակետը, որ բոլոնյան համակարգը բավական խորքային և էական փոփոխություններ է մտցրել ՀՀ բարձրագույն կրթական համակարգում: Մյուս կողմից, զգալի է այն ուսանողների թիվը (30%), որոնք հակառակ տեսակետն ունեն:

Հաջորդ դատողության հետ («Բոլոնյան համակարգը միայն մակերեսային փոփոխություններ է մտցրել, կրթությունը չի փոփոխվել») համաձայնվել է հարցվածների 48%-ը, ինչը մտահոգիչ, բացասական ցուցանիշ է:

Վերջապես, «Բոլոնյան համակարգը որևէ փոփոխություն չի մտցրել, ամեն ինչ նույնն է» դատողության հետ համաձայնել է հարցվողների գերակշիռ մեծամասնությունը՝ 73%-ը, ինչը ուսանողական ընկալման խիստ բացասական դրսևորում է:

Զգալի է այն ուսանողների թիվը (13-16%), որոնք դժվարացել են իրենց վերաբերմունքը հայտնել բերված դատողությունների մասին: Այս հարցում հստակ դիրքորոշման բացակայությունը նույնպես բացասական երևույթ է, ինչը վկայում է կամ ուսանողների անտարբերության, կամ իրազեկվածության ցածր մակարդակի մասին:

Գծապատկերում ներկայացված դատողությունների առնչությամբ մարզային ուսանողության ընկալումն ավելի դրական է: Օրինակ, նրանց 64.8%-ը համաձայնել է այն դատողության հետ, որ «Բոլոնյան համակարգի ներդրումը խորքային / էական փոփոխություններ է մտցրել կրթության ոլորտում», մինչդեռ Երևանի ուսանողության 59.5%-ն է հայտնել իր համաձայնությունը այս պնդմանը: Նույնատիպ պատկեր է նաև հաջորդ երկու դատողությունների պարագայում:

Աղյուսակ 2. Երևանի և մարզերի ուսանողության ընկալումները Բոլոնյան համակարգի ազդեցության վերաբերյալ

		Այո	Ոչ	Դժվարանում եմ պատասխանել
Բոլոնյան համակարգի ներդրումը խորքային / էական փոփոխություններ է մտցրել կրթության ոլորտում	Երևան	59.5%	28.5%	12%
	Մարզ	64.8%	31.1%	4.2%

		Այո	Ոչ	Դժվարանում եմ պատասխանել
Բոլոնյան համակարգի ներդրումը միայն մակերեսային փոփոխություններ է մտցրել, կրթությունը չի փոփոխվել	Երևան	38.9%	48.9%	12.1%
	Մարզ	36.6%	60%	3.4%
Բոլոնյան համակարգի ներդրումը որևէ փոփոխություն չի մտցրել, ամեն ինչ նույնն է	Երևան	11.7%	74.8%	13.5%
	Մարզ	7.6%	89%	3.4%

Հաջորդ աղյուսակը հնարավորություն է տալիս համեմատել բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների տեսակետները՝ միևնույն դատողությունների շուրջ:

Աղյուսակ 3. Բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների ընկալումները Բոլոնյան համակարգի ազդեցության վերաբերյալ:

		Այո	Ոչ	Դժվարանում եմ պատասխանել
Բոլոնյան համակարգի ներդրումը խորքային / էական փոփոխություններ է մտցրել կրթության ոլորտում	Բակալավրիատ	60.3%	28.8%	10.9%
	Մագիստրատուրա	52.9%	40.8%	6.3%
Բոլոնյան համակարգի ներդրումը միայն մակերեսային փոփոխություններ է մտցրել, կրթությունը չի փոփոխվել	Բակալավրիատ	37.8%	51.6%	10.6%
	Մագիստրատուրա	46.6%	43.7%	9.8%
Բոլոնյան համակարգի ներդրումը որևէ փոփոխություն չի մտցրել, ամեն ինչ նույնն է	Բակալավրիատ	11.7%	76.8%	11.5%
	Մագիստրատուրա	7.1%	82.3%	10.6%

Ինչպես տեսնում ենք, բակալավրիատի ուսանողներն ավելի բարձր են գնահատում բոլոնյան համակարգի բերած փոփոխությունները: Օրինակ, եթե մագիստրատուրայի ուսանողների 40.8%-ը չի համաձայնել այն պնդման հետ, որ «Բոլոնյան համակարգի ներդրումը խորքային / էական փոփոխություններ է մտցրել կրթության ոլորտում», ապա բակալավրիատում չհամաձայնվողների տեսակարար կշիռը 12%-ով ցածր է՝ 28.8%:

Գրեթե 10%-ով մեծ է մագիստրատուրայի այն ուսանողների տեսակարար կշիռը, որոնք գտնում են, որ բոլոնյան համակարգի ներդրումը միայն մակերեսային փոփոխություններ է մտցրել:

Հնարավոր է, պատկերացումների այս տարբերությունը պայմանավորված է մագիստրատուրայի ուսանողների երկարատև ուսումնառությամբ և համակարգի բացերը ճանաչելու առավել մեծ փորձառությամբ: Բացի այդ, կարող են ազդեցություն ունենալ մագիստրատուրայի ուսանողների կողմից կրթության նկատմամբ առաջադրվող առավել բարձր պահանջները:

Բավական հետաքրքիր է բերված պնդումների առնչությամբ բակալավրիատի տարբեր կուրսերի ուսանողների համաձայնության պատկերը: Նկատվում է հստակ

օրինաչափություն. ուսումնառության գործընթացին զուգընթաց նվազում է այն ուսանողների տեսակարար կշիռը, որոնք դրական ընկալում ունեն բոլոնյան համակարգի ազդեցության վերաբերյալ:

Գծապատկեր 4. «Բոլոնյան համակարգի ներդրումը խորքային / էական փոփոխություններ է մտցրել կրթության ոլորտում» պնդման հետ համաձայնած ուսանողների տեսակարար կշիռն՝ ըստ բակալավրիատի կուրսի



Ինչպես նախորդ գծապատկերում, հաջորդում ևս ակնհայտ է, որ ավարտական կուրսում բարձր է այն ուսանողների տեսակարար կշիռը, որոնք բոլոնյան համակարգի ներդրումը մակերեսային փոփոխություն են համարում:

Գծապատկեր 5. «Բոլոնյան համակարգի ներդրումը միայն մակերեսային փոփոխություններ է մտցրել, կրթությունը չի փոփոխվել» պնդման հետ համաձայնած ուսանողների տեսակարար կշիռն՝ ըստ բակալավրիատի կուրսի



Վերջապես, նմանատիպ պատկեր է առկա նաև վերջին դատողության առնչությամբ:

Գծապատկեր 6. «Բոլոնյան համակարգի ներդրումը որևէ փոփոխություն չի մտցրել, ամեն ինչ նույնն է» պնդման հետ համաձայնած ուսանողների տեսակարար կշիռն՝ ըստ բակալավրիատի կուրսի



Պետք է ընդգծել, որ այս օրինաչափությունը բնորոշ է նաև մագիստրատուրայի առաջին և երկրորդ կուրսերին: Երկրորդ կուրսում ակնհայտ գերակշռում են բոլոնյան համակարգի ազդեցության վերաբերյալ բացասական ընկալում ունեցող ուսանողները:

Հարցմանը մասնակցած ուսանողների մեծամասնությունը գտնում է, որ առավել էական փոփոխությունները, որին հանգեցրել է բոլոնյան համակարգի ներդրումը, ուսանողի ինքնուրույնության և դերի բարձրացումն է, ուսանողների միջև մրցակցության խթանումը, կրթության որակի բարելավումը, ինչպես նաև՝ կոռուպցիոն երևույթների նվազումը: Առավել մանրամասն՝ նշված խնդիրների վերաբերյալ, տե՛ս՝ հավելված 2:

Գծապատկեր 7. Բոլոնյան համակարգի ներդրմամբ տեղի ունեցած կարևոր փոփոխությունները



Հարցմանը մասնակցած ուսանողների գրեթե կեսը գտնում է, որ բոլոնյան համակարգի ներդրումից հետո առավել պաշտպանված են դարձել ուսանողները, լսելի են դարձել նրանց խնդիրները: Փոքր է նրանց թիվը (13%), ովքեր գտնում են որ համակարգի ներդրումն այս խնդրի վրա ոչ մի ազդեցություն չի ունեցել:

Կրկին, ինչպես նախորդ հարցերի պարագայում, զգալի է այն ուսանողների թիվը (22%), ովքեր դժվարացել են պատասխանել: Այս ցուցանիշը վկայում է այն մասին, որ յուրաքանչյուր 5-րդ ուսանողի համար ակնհայտ և շոշափելի չեն բոլոնյան համակարգի օգուտները: Մյուս կողմից, այս պատասխանը կարող է լինել համեմատության համար անհրաժեշտ փորձի բացակայության հետևանք: Որևէ համակարգի առավելությունները գնահատելու համար ուսանողները պետք է բավարար տեղեկատվություն ունենան նախորդ կամ այլընտրանքային այլ համակարգերի մասին: Հնարավոր է, ուսանողների մի զգալի հատված չունի այդ համեմատական վերլուծության հնարավորությունը:

Գծապատկեր 8. Բոլոնյան համակարգի ազդեցությունը ուսանողների գիտելիքների օբյեկտիվ գնահատման վրա (%)



Հարցվողների 41%-ը գտնում է, որ համակարգը մասամբ ազդել է ուսանողների գիտելիքների օբյեկտիվ գնահատման մեխանիզմի վրա: 30%-ը նշել է համակարգի էական ազդեցության, իսկ 18%-ը՝ որևէ ազդեցության բացակայության մասին:

Այսպիսով, բոլոնյան համակարգի մասին ուսանողների շրջանում իրազեկվածության մակարդակը բավական ցածր է: Ուսանողները նշել են, որ իրենց ստացած տեղեկատվությունը բավարար չէ համակարգն ամբողջությամբ պատկերացնելու համար:

Միևնույն ժամանակ, առկա է բոլոնյան համակարգի էության բավական նեղ ընկալում: Այն հիմնականում նույնացվում է կրեդիտային գնահատման և փոխանցման համակարգի կամ, լավագույն դեպքում, որակի ապահովման գործընթացի հետ: Առաջինն էլ հիմնականում ընկալվում է որպես զուտ բալային գնահատում, ինչը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ դասախոսների մի մասը, չպատկերացնելով կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգի բովանդակությունը, շարժվում է նախկին գնահատման համակարգով (վերածում է 5 բալանոց գնահատականը 20 կամ 100 միավորի՝ չկարողանալով բացատրել կրեդիտի էությունը):

Ինչ վերաբերում է բոլոնյան համակարգի նույնացմանը որակի ապահովմանը, ապա դա հիմնականում կապված է բուհերում գործող որակի ապահովման կենտրոնների ակտիվ գործունեության հետ, ինչը դրական միտում կարելի է համարել:

Բոլոնյան կրթական համակարգի ներդրումը, նպատակ ունենալով Հայաստանը ինտեգրել եվրոպական բարձրագույն կրթական տարածաշրջանին, ըստ ուսանողների՝ դեռևս ամբողջությամբ չի իրագործվել ոչ թե համակարգի լավ կամ վատ լինելու,

այլ ներդրման գործընթացի թերացումների պատճառով: Որպես հետևանք, ուսանողների կարծիքով, ՀՀ բարձրագույն կրթությունը դեռևս չի համապատասխանում միջազգային չափանիշներին:

ՀՀ բուհերում, ըստ ուսանողների, բոլոնյան համակարգի ներդրումից հետո ուսանող-դասախոս փոխհարաբերություններն ակնհայտորեն չեն բարելավվել, ինչպես նաև՝ չեն նվազեցվել կոռուպցիոն ռիսկերը: Միևնույն ժամանակ, համակարգի ներդրումից հետո էական փոփոխություններ են եղել գնահատման օբյեկտիվության բարձրացման ասպարեզում, ինչը թեստային համակարգի ներդրման արդյունք է: Ուսանողների միջև մրցակցության խթանման շնորհիվ աճել է նրանց ինքնուրույնությունն ու ակտիվությունը:

Բոլոնյան համակարգի ազդեցության վերաբերյալ մարզային ուսանողության ընկալումն ավելի դրական է, քան Երևանի ուսանողներինը: Նրանց առավել մեծ տոկոսն է համաձայնել այն դատողության հետ, որ «Բոլոնյան համակարգի ներդրումը խորքային / էական փոփոխություններ է մտցրել կրթության ոլորտում»:

Բակալավրիատի ուսանողները, համեմատած մագիստրատուրայի ուսանողների, ավելի բարձր են գնահատում բոլոնյան համակարգի բերած փոփոխությունները: Գրեթե 10%-ով մեծ է մագիստրատուրայի այն ուսանողների տեսակարար կշիռը, որոնք գտնում են, որ բոլոնյան համակարգի ներդրումը միայն մակերեսային փոփոխություններ է մտցրել:

Հնարավոր է, պատկերացումների այս տարբերությունը պայմանավորված է մագիստրատուրայի ուսանողների՝ համակարգի բացերը ճանաչելու առավել մեծ փորձառությամբ և կրթության որակի նկատմամբ առաջադրվող առավել բարձր պահանջներով:

Կա հստակ օրինաչափություն. ուսումնառության տարիներին զուգընթաց՝ նվազում է այն ուսանողների տեսակարար կշիռը, որոնք դրական ընկալում ունեն բոլոնյան համակարգի ազդեցության վերաբերյալ: Թե՛ բակալավրիատի, թե՛ մագիստրատուրայի ավարտական կուրսերում, համեմատած ցածր կուրսերի, ավելի բարձր է այն ուսանողների տեսակարար կշիռը, որոնք բոլոնյան համակարգի ներդրումը մակերեսային, ոչ էական փոփոխություն են համարում:

2. Եռաստիճան կրթական համակարգ

Բոլոնյան գործընթացի մեկնարկի առաջին իսկ պահից եռաստիճան կրթական համակարգի ներդրումը դրա հիմնական նպատակներից մեկն է հանդիսացել: 1999 թվականին Բոլոնիայի հռչակագրի ստորագրումից հետո ներկայացվեց երկաստիճան կրթական համակարգը և դրան համապատասխան կրեդիտային համակարգը՝ որպես կրթության շարժունությունը խթանելու կարևոր գործոն: Հետագայում՝ Բերգենի կոմյունիկեում, երկաստիճան կրթական համակարգը վերափոխվեց եռաստիճանի՝ առաջին (բակալավրիատի) և երկրորդ (մագիստրատուրայի) աստիճաններին հավելվեց նաև երրորդը՝ դոկտորական աստիճանը: Ներկայումս այս ոլորտում բավական լայնածավալ աշխատանքներ են տարվում՝ կապված հատկապես դոկտորական ինստիտուտների ներդրման անհրաժեշտության գիտակցման հետ:

Հարցմանը մասնակցած ուսանողների մեծ մասը եռաստիճան կրթական համակարգը դիտարկում է որպես մասնագիտական կրթության խորացման, մասնագիտության փոփոխության, միջազգային կրթական համակարգում ճանաչելի/համադրելի կրթություն ստանալու և այլ երկրներում ուսումը շարունակելու բավական լավ հնա-

րավորություն: Միևնույն ժամանակ, մեծ է նաև ուսանողների թիվը (19%), ովքեր դժվարացել են պատասխանել այն հարցին, թե եռաստիճան կրթական համակարգն ինչ դրական հնարավորություններ է ընձեռում իրենց: Սա ևս մեկ անգամ վկայում է համակարգի վերաբերյալ տեղեկացվածության ցածր մակարդակի մասին:

Աղյուսակ 4. Ուսանողների տեսակետները եռաստիճան կրթական համակարգի ընձեռած հնարավորությունների վերաբերյալ (%)

	Տոկոս
Մասնագիտական կրթության խորացում	38
Բակալավրիատից հետո մասնագիտությունը փոխելու հնարավորություն	14
Այլ երկրներում կրթություն ստանալու հնարավորություն	11
Միջազգային կրթական համակարգում ճանաչելի / համադրելի կրթություն	9
Աշխատելու հնարավորություն	3
Ձևական բնույթ ունի, ոչ մի փոփոխություն չի տալիս	3
Պրակտիկ գիտելիքներ	1
Հեշտացնում է սովորելը	1
Ինքնուրույնություն	1
Դժվարանում եմ պատասխանել	19

Բակալավրիատի կրթական աստիճանում սովորող ուսանողների ճնշող մեծամասնությունը՝ շուրջ 79 տոկոսը, մտադիր է կրթությունը շարունակել մագիստրատուրայում:

Հատկանշական է, որ մարզերի ուսանողության շրջանում նման ցանկություն հայտնած ուսանողների տեսակարար կշիռն ավելի բարձր է՝ 84.2%, իսկ Երևանում՝ շուրջ 10%-ով ավելի ցածր՝ 74.8%:

Մագիստրատուրայում կրթությունը շարունակելու հիմնական շարժառիթը ուսանողների գրեթե կեսը համարում է մասնագիտական նոր գիտելիքների ձեռքբերումը: Մեծ է նաև աշխատանք գտնելու հոգսը թեթևացնելու և «լիարժեք կրթություն»[3] ստանալու համար մագիստրատուրայում սովորելու ցանկություն ունեցողների թիվը:

Գծապատկեր 9. Կրթությունը մագիստրատուրայում շարունակելու շարժառիթները (%)



[3] Դեռևս պահպանվում է այն ընկալման իներցիան, որ բակալավրիատն, առանց մագիստրատուրայի, թերի, ոչ լիարժեք կրթություն է ապահովում:

Ուսանողները ասպիրանտուրայում կրթությունը շարունակելու հիմնական շարժառիթներ են համարում մասնագիտական առաջխաղացումը (37%), գիտության զարգացումն (27%) ու հեղինակության ձեռքբերումը (12%), ինչպես նաև՝ բանակից խուսափելը՝ տղաների դեպ քում (7%):

Բացի այդ, ըստ ուսանողների, մասնագիտական աշխատանք գտնելու հնարավորությունը մոտ 30 տոկոսով աճում է մագիստրոսական և ասպիրանտական կրթական աստիճան ունենալու դեպ քում:

Ըստ ուսանողների՝ մագիստրոսական կրթությունը աշխատաշուկայի պահանջներին համապատասխանեցնելու համար էական քայլերից են մասնագիտական գիտելիքների խորացումը (24%), առավել գործնական նշանակություն ունեցող առարկաների ներդրումը (21%), պրակտիկայի հնարավորության տրամադրումը (16%):

Հարցվածների 12%-ը նշել է, որ մագիստրատուրայում կրթությունը աշխատաշուկայի պահանջներին համապատասխանեցնելու համար ոչինչ չի արվում, իսկ 25%-ն էլ դժվարացել է պատասխանել այդ հարցին:

Բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերում, ըստ մագիստրատուրայի ուսանողների մեծամասնության (60.1%), մասամբ առկա են կրկնություններ:

Մագիստրատուրայի ուսանողների 13.5%-ը նշել է, որ ծրագրերում շատ են կրկնությունները, իսկ 3.4%-ը՝ որ կրթական երկու աստիճանների ծրագրերը ամբողջությամբ նույնն են: Մագիստրատուրայում սովորողների միայն 18.3%-ն է նշել ծրագրերի՝ ամբողջությամբ տարբեր լինելու մասին:

Հետաքրքիր է, որ պատասխանների բաշխվածության տարբերություն է նկատվում ըստ մագիստրատուրայի տարբեր կուրսերի: Օրինակ, եթե մագիստրատուրայի առաջին կուրսում հարցվածների 15.2%-ն է նշել, որ ծրագրերում շատ են կրկնությունները, ապա 2-րդ կուրսում այդպես է կարծում հարցվածների 27.8%-ը: Այս զգալի տարբերությունը, հնարավոր է, վկայությունն է այն բանի, որ ուսումնառության գործընթացին զուգահեռ, ուսանողներն առավել ճշգրիտ, փորձի վրա հիմնված գնահատական են ձևավորում:

Նմանատիպ պատկեր է առկա նաև դասավանդման մեթոդների փոփոխությունը գնահատելու հարցում: Եթե մագիստրատուրայի առաջին կուրսում հարցվածների 42.6%-ն է նշել, որ բակալավրիատում և մագիստրատուրայում դասավանդման մեթոդների միջև էական փոփոխություններ չկան, ապա 2-րդ կուրսում այդպես է կարծում հարցվածների 48.6%-ը: Կրկին՝ ուսանողի փորձառության աճին զուգահեռ՝ աճում է քննադատական մոտեցման հավանականությունը:

Երևանում սովորող ուսանողների 57.9%-ն է նշել բակալավրիատի և մագիստրատուրայի ծրագրային կրկնությունների մասին («ծրագրերում մասամբ առկա են կրկնություններ» և «ծրագրերում շատ են կրկնությունները» տարբերակները՝ միասին), իսկ մարզերի ուսանողության միայն 34.5%-ն է այդ կարծիքին:

«Բակալավրիատի և մագիստրատուրայի ծրագրերն ամբողջությամբ նույնն են» պատասխանի տարբերակն ընտրել է մարզերի ուսանողության միայն 2.7%-ը, իսկ Երևանի ուսանողության՝ 7.7%-ը (5%-ով ավելի):

Կարևոր խնդիր է նաև կրթական ծրագրերի փոխկապվածությունը: Մագիստրատուրայի ուսանողների զգալի մասը (55%) գտնում է որ բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերը մասամբ են միմյանց կապված:

Գծապատկեր 10. Կրթական ծրագրերի փոխկապվածությունը եռաստիճան համակարգում՝ ըստ մագիստրատուրայի ուսանողների ընկալման (%)



Կրթական տարբեր աստիճաններում դասավանդման մեթոդների փոփոխություններին անդրադառնալով՝ մագիստրատուրայի ուսանողների 38.1%-ը նշել է, որ էական փոփոխություններ չկան: Հարցվողների փոքր մասն է (20.8%) միայն նշել, որ նկատվում է դասավանդման մեթոդների էական փոփոխություն:

Իսկ մագիստրատուրայի ուսանողների 37.7%-ը նշել է դասավանդման մեթոդների որոշ փոփոխությունների մասին:

Այս հարցի շուրջ Երևանի և մարզերի ուսանողության կարծիքներն էականորեն չեն տարբերվում:

Գծապատկեր 11. Դասավանդման մեթոդների փոփոխություններն՝ ըստ մագիստրատուրայի ուսանողների ընկալման (%)



Այսպիսով, ՀՀ բուհերի ուսանողների իրազեկվածությունը ցածր է ոչ միայն ընդհանուր համակարգի մասին պատկերացումների տեսանկյունից, այլև՝ ըստ դրա առանձին բաղադրիչների: Մասնավորապես, եռաստիճան կրթական համակարգը ու-

սանողների մեծ մասը դիտարկում է որպես մասնագիտական գիտելիքները խորացնելու, մասնագիտությունը փոխելու և արտասահմանում կրթությունը շարունակելու հնարավորություն:

Բակալավրի կրթաստիճանում սովորող ուսանողների մեծ մասի ցանկությունը՝ շարունակելու կրթությունը մագիստրատուրայում՝ աշխատանք ավելի հեշտ գտնելու նպատակով, թույլ է տալիս եզրակացնել, որ Հայաստանում դեռևս բակալավրի աստիճանը դիտարկվում է որպես թերի և ոչ լիարժեք բարձրագույն կրթություն: Բնականաբար, այս մոտեցումը չի համապատասխանում բոլոնյան համակարգի հիմնական սկզբունքներին և համակարգի թյուր մեկնաբանության հետևանք է:

Մտահոգիչ է այն հանգամանքը, որ ասպիրանտուրայում կրթությունը շարունակելու շարժառիթներից է համարվում բանակից խուսափումը՝ արական սեռի ուսանողների համար, ինչը ևս չի համապատասխանում բոլոնյան համակարգի փիլիսոփայությանը:

Հուսադրող է այն, որ ուսանողներն ակնկալում են եռաստիճան կրթական համակարգում մեկ աստիճանից մյուսը փոխադրվելիս ստանալ նոր հմտություններ, մասնագիտական գիտելիքներ և փորձ ձեռք բերել: Սակայն համակարգն արդյունավետ չի գործում, քանի որ, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսանողների հավաստմամբ, տարբեր աստիճանների կրթական ծրագրերը մասամբ են փոխկապված, բացի այդ՝ մասամբ կրկնում են իրար: Մագիստրատուրայում դասավանդվում են բովանդակային առումով նույն առարկաները, սակայն՝ տարբեր անվանումներով:

Մագիստրատուրայի ուսանողների փոքր մասն է (յուրաքանչյուր 5-րդ հարցվողը) միայն նշել, որ նկատվում է դասավանդման մեթոդների էական փոփոխություն: Հարցվողների զգալի մասը կարծում է, որ բակալավրիատում և մագիստրատուրայում դասավանդման մեթոդների էական փոփոխություն չկա:

Մագիստրատուրայի երկրորդ կուրսում, համեմատած առաջին կուրսի, ավելի մեծ տեսակարար կշիռ ունեն այն հարցվողները, որոնց կարծիքով, ծրագրերում շատ են կրկնությունները, ինչպես նաև՝ ավելի մեծ տոկոս են կազմում այն ուսանողները, որոնք գտնում են, որ բակալավրիատում և մագիստրատուրայում դասավանդման մեթոդների միջև էական փոփոխություններ չկան:

Ընկալման այս տարբերությունը, հնարավոր է, պայմանավորված է այն հանգամանքով, որ ուսանողի փորձառության աճին զուգահեռ՝ աճում է քննադատական մոտեցման և ճշգրիտ, փորձի վրա հիմնված գնահատական ձևավորելու հնարավորությունը:

3. Կրթական շարժունություն

Ուսանողների շարժունությունը միշտ էլ մեծ կարևորություն է ներկայացրել Բոլոնյան կրթական համակարգի շրջանակներում՝ Եվրոպական բարձրագույն կրթական տարածաշրջանում փոխադարձ ճանաչելիությունն ապահովելու ու գիտելիքներ փոխանակելու համար: Շարժունությունը խթանում է բազմազանության, հանդուրժողականության և ժողովրդավարական արժեքների տարածումը ամբողջ Եվրոպայում:

Կրթական շարժունության վերաբերյալ ուսանողների տեղեկացվածությունը բավական ցածր է: Ուսանողների մեծամասնությունը տեղյակ չէ բոլոնյան համակարգի այս կարևորագույն բաղադրիչներից մեկից: Ընդ որում, որպես տեղեկացվածության առաջնային աղբյուր հարցման ենթարկվածները կրկին նշել են համացանցը և բու-

հում կազմակերպված սեմինարներն ու քննարկումները, ինչպես նաև՝ դասախոսներին և ուսանողական խորհուրդները: Սակայն այդ աղբյուրներից ստացած տեղեկությունները հարցվողների կեսը միայն մասամբ է համարում բավարար: Յուրաքանչյուր 4-րդ հարցվողն էլ այդ տեղեկատվությունը համարում է ոչ բավարար:

Ինչպես նախորդ հարցերի դեպքում, այստեղ էլ նույնպես մարզերի ուսանողության բավարարվածությունը տրամադրվող տեղեկատվությունից ավելի բարձր է (28.9%), քան Երևանի ուսանողության շրջանում (20.1%):

Կրթական շարժունությունից տեղյակ ուսանողներն այն դիտարկում են որպես միջբուհական և ներբուհական փոխանակման հնարավորություն (33%): Մեծ է այն ուսանողների թիվը, ովքեր շարժունությունը դիտարկում են որպես մասնագիտությունը փոխելու (12%), ինչպես նաև՝ արտասահմանում ուսումը շարունակելու միջոց (27%):

Գծապատկեր 12. Կրթական շարժունությունն ըստ ուսանողների (%)



Կրթական շարժունության հնարավորություններն առավելապես ապահովված են բուհի ներսում, այնուհետև՝ ՀՀ բուհերի շրջանում, իսկ առավել քիչ՝ արտերկրի բուհերում: Մեծամասնության կարծիքով, շարժունությունը ՀՀ բուհերում և արտերկրում մասամբ է ապահովված: Այնուամենայնիվ, հարցված ուսանողների միայն փոքր մասը՝ 5 տոկոսն է սովորել արտասահմանում: Ընդ որում, Երևանում և մարզերում նրանց տեսակարար կշիռը գրեթե հավասար է (համապատասխանաբար 5.1% և 5.8%):

Քիչ է նաև այն ուսանողների թիվը, ովքեր երբևէ օգտվել են միջբուհական (11%) և ներբուհական (17%) շարժունության հնարավորություններից: Հետևաբար, այս հարցին տրված պատասխանները հիմնվում են ոչ թե հարցվողի անմիջական փորձառության, այլ՝ դիտարկումների ու տեղեկատվության տարբեր աղբյուրներից ձևավորված ընկալման վրա:

Ուսանողների կեսից ավելին գտնում է, որ բոլոր ուսանողները հավասար հնարավորություններ ունեն՝ օգտվելու կրթական շարժունությունից: Միաժամանակ առանձնացվել են ուսանողական այն խմբերը, որոնք ունեն շարժունությունից օգտ-

վելու առավել մեծ հնարավորություններ (բարձր առաջադիմությամբ, լեզուների իմացությամբ, ֆինանսապես ապահովված և բուհում ծանոթներ/բարեկամներ ունեցող ուսանողները):

Այս բաղադրիչի առնչությամբ ուսանողների իրազեկվածության մակարդակը շեշտակի ավելի ցածր է, քան այլ բաղադրիչների առումով: Ուսանողների գերակշիռ մասը հարցազրույցների ժամանակ չի կարողացել նույնիսկ սահմանել «կրթական շարժունություն» հասկացությունը: Այնուամենայնիվ, կրթական շարժունության վերաբերյալ փոքր-ինչ պատկերացում ունեցող ուսանողները գտնում են, որ շարժունությունն առավելապես ապահովված է բուհի ներսում, իսկ միջբուհական և միջազգային շարժունության դեպքում ի հայտ են գալիս որոշ խոչընդոտներ: Միջազգային շարժունության դեպքում այդ խնդիրները կարողանում են հաղթահարել այն ուսանողները, ովքեր ունեն բարձր առաջադիմություն, ֆինանսապես ապահովված են, ունեն լեզուների բավարար իմացություն:

4. Սոցիալական ընդգրկվածություն

Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիան սոցիալական ընդգրկվածությունը դիտարկում է որպես բոլոնյան գործընթացի հիմնաքարերից մեկը: Սոցիալական ընդգրկվածության վերաբերյալ հարցումները նպատակ ունեն պարզելու, թե արդյոք ՀՀ-ում հասարակության բոլոր շերտերին պատկանող ուսանողները հավասար կամ գոնե ինչ-որ չափով հնարավորություն ունեն մուտք գործելու բարձրագույն կրթության համակարգ: Սոցիալապես կայուն բարձրագույն կրթական համակարգը արդյունավետ ազդեցություն կունենա ամբողջ հասարակության կայացման վրա, քանի որ կապահովվի տարբեր խմբերի ներգրավվածությունը տարբեր տեսակի աշխատանքներում՝ կյանքի որակը բարձրացնելու տեսանկյունից:

Ըստ ուսանողների մեծամասնության (61%)՝ սոցիալական ոչ բոլոր շերտերն ունեն հավասար հնարավորություններ՝ բարձրագույն կրթական համակարգում ընդգրկվելու համար:

5-միավորանոց սանդղակով հարցվողները գնահատել են ուսանողների տարբեր խմբերի պաշտպանվածության կարիքները բարձրագույն կրթության համակարգում: Սանդղակի նվազագույն՝ 1 միավորը նշանակում է, որ տվյալ խումբը բոլորովին աջակցության կարիք չունի, իսկ 5 միավորը՝ միանշանակ ունի աջակցության կարիք: Գնահատման արդյունքները ներկայացված են ստորև բերված գծապատկերում:

Առավել պաշտպանվածության կարիք ունեն հատուկ կարիքավոր (73%) և անապահով ընտանիքների (70%) ուսանողները: Ուսանողները նշում են նաև, որ հարաբերականորեն պաշտպանված են ազգային, սեռական ու կրոնական փոքրամասնությունների, նաև՝ մեծահասակ ուսանողների շահերը: Սեռական ու կրոնական փոքրամասնությունների առնչությամբ ակնհայտ գերակշռում է սանդղակի 1 միավորի («տվյալ խումբը բոլորովին աջակցության կարիք չունի») հանդիպման հաճախականությունը: Այս ցուցանիշը կարող է լինել ոչ միայն փաստի արձանագրման, այլև՝ նշված խմբերի նկատմամբ հարցվողների բացասական, կարծրատիպային վերաբերմունքի արդյունք:

Գծապատկեր 13. Ուսանողների պաշտպանվածության կարիքները բարձրագույն կրթության համակարգում (%)



Հարցվողների գերակշիռ մեծամասնությունը (78%) համարում է, որ մագիստրատուրա մուտք գործելու համար առկա չէ սեռային խտրականություն, տղաներն ու աղջիկները ունեն հավասար հնարավորություններ:

Ասպիրանտուրայի պարագայում հարցվողների 69%-ն է նշել սեռային խտրականության բացակայության մասին: Այնուամենայնիվ, հարցվողների 12%-ը նշել է աղջիկներին, իսկ 5%-ը՝ տղաներին տրվող նախապատվության մասին:

Հետաքրքիր է դիտարկել այս հարցին տրված պատասխանների բաշխումը՝ ըստ հարցվողների սեռի: Այսպես, հարցման մասնակից տղաների 11.1%-ը գտնում է, որ մագիստրատուրայի ընդունելության հարցում նախապատվություն է տրվում աղջիկներին: Աղջիկների միայն 6.5%-ն է այդ կարծիքին:

Հարցման մասնակից տղաների 8.5%-ը գտնում է, որ մագիստրատուրայի ընդունելության հարցում նախապատվություն է տրվում տղաներին: Աղջիկների միայն 5%-ն է այդ կարծիքին:

Ընդհանուր առմամբ, աղջիկների շրջանում, համեմատած տղաների, զգալիորեն մեծ է (մոտ 11%-ով) այն հարցվողների տեսակարար կշիռը, ովքեր գտնում են, որ սեռերի միջև տարբերություն չի դրվում այս հարցում:

Ասպիրանտուրայի պարագայում երկու սեռի հարցվողների շրջանում էլ կարծես նկատվում է որոշակի համաձայնություն: Այսպես, տղաների շուրջ 14, իսկ աղջիկների 11.6 տոկոսը կարծում է, որ ասպիրանտուրայում սովորելու համար նախապատվություն է տրվում աղջիկներին:

Մյուս կողմից, տղաների 8.7%-ը, իսկ աղջիկների 3.5%-ը կարծում է, որ ասպիրանտուրայում սովորելու համար նախապատվություն է տրվում տղաներին:

Այսպիսով, երկու սեռի հարցվողների շրջանում էլ ավելի մեծ թիվ են կազմում

այն հարցվողները, որոնք նշել են աղջիկներին տրվող նախապատվության մասին:

Անդրադառնալով այն հարցին, թե կա արդյոք բուհում որևէ իրավական ակտ կամ կանոնակարգ, ըստ որի սահմանվում են այս կամ այն խմբի/խավի իրավունքները, հարցվածների զգալի մասը՝ 47%-ը, դժվարացել է պատասխանել, իսկ 30%-ը տեղյակ չէ: Բուհում գործող իրավական ակտերի մասին առավելապես տեղեկացված են Երևանում տեղակայված համալսարանների ուսանողները:

Վարձավճարների զեղչերից և կրթաթոշակի ստացման հնարավորությունից օգտվել է հարցվածների 30 տոկոսը, իսկ անվճար սննդի, տրանսպորտի արտոնություններից՝ հարցվածների 3 տոկոսը:

Վերլուծելով հարցվածների շրջանում կրթական մեկ կիսամյակի վրա ծախսվող գումարների գոյացման աղբյուրները՝ պարզ է դառնում, որ հարցվողների բացարձակ մեծամասնության՝ 64%-ի դեպ քում հիմնական աղբյուրը ընտանեկան բյուջեն է: Հարցվողների 7%-ը որպես աղբյուր նշել է ուսանողական կրթաթոշակը, 2%-ը՝ ուսանողական վարկը, 11%-ը՝ վարձատրվող աշխատանքը, 1%-ի համար աղբյուր են հանդիսանում բարեգործություններն ու մասնավոր օգնությունները: Հարցին դժվարացել է պատասխանել հարցվողների 15%-ը:

Գծապատկեր 14. Կրթական մեկ կիսամյակի վրա ծախսվող գումարի գոյացման աղբյուրները (%)



Ընդհանուր առմամբ, հարցվածների 23%-ն իր ամբողջ ուսումնառության ընթացքում որևէ վարձատրվող աշխատանք է կատարել՝ ուսման վարձավճարը վճարելու նպատակով:

Հարցվողները պատասխանել են այն հարցին, թե իրենց ընտանեկան բյուջեի որ մասն է ծախսվում ուսման վարձի վճարման համար: Հարցվողների 22%-ը նշել է, որ բարձրագույն կրթության ծախսերը կազմում են իրենց ընտանեկան բյուջեի 31-50%-ը: Հարցվողների 24%-ի կարծիքով, այդ ծախսը ընտանեկան բյուջեի մինչև 30%-ն է կազմում:

Գծապատկեր 15. Ընտանեկան բյուջեից ուսման վարձի համար հատկացվող մասը (%)



Այսպիսով, ըստ ուսանողների մեծամասնության, սոցիալական ոչ բոլոր շերտերն ունեն հավասար հնարավորություններ՝ բարձրագույն կրթական համակարգում ընդգրկվելու համար: Առավել պաշտպանվածության կարիք ունեն հատուկ կարիքավոր և անապահով ընտանիքների ուսանողները: Հարաբերականորեն պաշտպանված են ազգային, սեռական ու կրոնական փոքրամասնությունների, նաև՝ մեծահասակ ուսանողների շահերը:

Հարցվողների գերակշիռ մեծամասնությունը (78%) համարում է, որ մագիստրատուրա մուտք գործելու համար առկա չէ սեռային խտրականություն, մինչդեռ ասպիրանտուրայի պարագայում այդպես է կարծում հարցվողների 69%-ը: Հետազոտությանը մասնակցած աղջիկների շրջանում, համեմատած տղաների, զգալիորեն մեծ է (մոտ 11%-ով) այն հարցվողների տեսակարար կշիռը, ովքեր գտնում են, որ սեռերի միջև տարբերություն չի դրվում մագիստրատուրայի ընդունելության հարցում: Երկու սեռի հարցվողների շրջանում էլ ավելի մեծ թիվ են կազմում այն հարցվողները, որոնք նշել են ասպիրանտուրայի ընդունելության ընթացքում աղջիկներին տրվող նախապատվության մասին:

Հարցվածների զգալի մասը (47%) դժվարացել է պատասխանել կամ նշել է, որ տեղյակ չէ (30%)՝ արդյոք իրենց բուհում գործում է որևէ իրավական ակտ կամ կանոնակարգ, որով սահմանվում են այս կամ այն խմբի/խավի իրավունքները: Բուհում գործող իրավական ակտերի մասին առավելապես տեղեկացված են մայրաքաղաքի համալսարանների ուսանողները:

5. Ուսանողակենտրոն ուսուցում

Ուսանողակենտրոն ուսուցումը կրթության այնպիսի փիլիսոփայական ըմբռնում է, որտեղ ուսանողների պահանջմունքները կենտրոնում են: Ավելի նեղ իմաստով, այն մանկավարժական մոդել է, որը նպատակ ունի կազմակերպելու ուսումնական գործընթացը՝ ուսանողների ներգրավմամբ: Ուսանողակենտրոն ուսուցման տեսանկյունից կրթությունը դիտարկվում է որպես ակտիվ և ինտերակտիվ գործընթաց. ուսանողները կրթության ակտիվ մասնակիցներ են և պատասխանատվություն են կրում իրենց ուսուցման համար: Սա բերում է ուսանողների ինքնուրույնության մեծացմանը և դասախոս-ուսանող փոխհարաբերություններում փոխադարձ հարգանքի մեծացմանը:

Ուսանողակենտրոն ուսուցման էությունը ուսանողները հասկանում են որպես

ուսանողների որոշումների կայացման գործընթացում դերի մեծացում, բուհի գործունեության շրջանակներում ուսանողների շահերի պաշտպանություն, ուսանողների ինքնուրույնության ավելացում և անհատական ուսումնառության ընդլայնում: Մեծ է նաև այն ուսանողների թիվը, ովքեր դժվարացել են պատասխանել այս հարցին, ինչը ևս մեկ անգամ արտացոլում է համակարգի ու դրա հիմնական տարրերի մասին տեղեկացվածության պակասը:

Աղյուսակ 5. Ուսանողների պատկերացումները ուսանողակենտրոն ուսուցման մասին

	Պատասխանի հաճախականություն	**Տոկոս**
Ավելանում է ուսանողի անհատական ուսումնառության չափաբաժինը	249	11.3
Ավելանում է ուսանողների ինքնուրույնությունը	291	13.2
Մեծանում է ուսանողների ակտիվ դերը / Ուսանողների ներառում որոշումների կայացման գործում	469	21.2
Բոլոր գործողությունները ուղղված են ուսանողներին	354	16
Նվազում է դասախոսի դերը	53	2.4
Կարևորվում է ուսանողի կարծիքը	73	3.3
Ուսանող – դասախոս ազատ շփում	12	0.5
Արդյունավետ ուսուցում, գիտելիքի տրամադրում	21	1
Ուսանողին տրամադրվում է անհրաժեշտ գրականություն	6	0.3
Ֆինանսական աջակցություն ուսանողին	3	0.1
Հաշվի են առնվում ուսանողի գիտելիքները	4	0.2
Ուսանողների իրավունքների, շահերի ու հնարավորությունների պաշտպանում և ընդլայնում	45	2
Ավելացնում է ուսանողի տեղեկացվածությունը	4	0.2
Ուսանողների խնդիրների բարձրաձայնում	10	0.5
Անհատական մոտեցում յուրաքանչյուր ուսանողին	6	0.3
Հասանելի և մատչելի ուսուցում	3	0.1
Դժվարանում եմ պատասխանել	605	27.4
Ընդամենը	**2208**	**100**

Դասավանդվող առարկաների ընտրության տեսանկյունից հայաստանյան բուհերը կամ սահմանափակ հնարավորություն են տալիս ուսանողներին, կամ՝ չկա ընտրության որևէ հնարավորություն:

Գծապատկեր 16. Բուհում առկա հնարավորությունները՝ դասավանդվող առարկաների ընտրության հարցում (%)



Մարզերի ուսանողության 44.7%-ն է նշել, որ չունի դասավանդվող առարկաների ընտրության որևէ հնարավորություն: Երևանի դեպ քում այս ցուցանիշը 32.7% է:

Այսպիսով, 12%-ի էական տարբերությունը մտահոգիչ փաստ է, ինչը վկայում է մարզերում ուսանողակենտրոն ուսուցման առավել վատթար իրավիճակի մասին:

Հաջորդ աղյուսակից պարզ է դառնում, որ մագիստրատուրայում դասավանդվող առարկաների ընտրության հնարավորություններն ավելի սահմանափակ են, քան բակալավրիատում:

Հնարավոր է, կարծիքների այս տարբերությունը պայմանավորված է ոչ միայն կրթական տարբեր աստիճաններում առկա իրական տարբերությամբ, այլև՝ մագիստրատուրայի ուսանողների առավել բարձր ակնկալիքներով (իրենց հետաքրքրող առարկաներն ընտրելու հարցում):

Աղյուսակ 6. Բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների պատկերացումները դասավանդվող առարկաների ընտրության հնարավորության վերաբերյալ

	Կա լայն հնարավորություն	Կա սահմանափակ հնարավորություն	Չկա որևէ հնարավորություն	Դժվարանում եմ պատասխանել
Բակալավրիատ	10.9%	44.8%	35.4%	8.8%
Մագիստրատուրա	5.5%	60.4%	30%	4.1%

Ուսումնական ծրագրերի կազմման աշխատանքներում ուսանողները կամ սահմանափակ մասնակցություն ունեն, կամ ընդհանրապես չունեն նման հնարավորություն: Մի շարք բուհերում ակտիվ մասնակցություն ունենալու տարբերակը կամ ընդհանրապես չի գրանցվել, կամ՝ դրա հանդիպման հաճախականությունը մոտ է եղել 1-2 տոկոսին (միայն մի քանի բուհերում):

Գծապատկեր 17. Ուսանողների մասնակցությունը ուսումնական ծրագրերի կազմման աշխատանքներին (%)



Երբեմն ուսանողների պահանջով փոփոխվել են ուսումնական ծրագրերը (այսպես է պատասխանել հարցվածների 49%-ը), սակայն յուրաքանչյուր 5-րդ հարցվողը (20%) նշել է, որ իր ուսումնառության ընթացքում երբեք նման դեպք չի եղել:

Ուսանողները գտնում են, որ դասավանդվող առարկաները կամ մասամբ, կամ էլ ամբողջովին միտված են որպես ապագա մասնագետի՝ իրենց կարողությունների ու հմտությունների ձևավորմանը:

Գծապատկեր 18. Դասավանդվող առարկաների արդյունավետությունը («Դասավանդվող առարկաները միտված են արդյոք Ձեր գիտելիքների, հմտությունների ու կարողությունների ձևավորմանը՝ որպես ապագա մասնագետի»)



Անդրադառնալով ուսանողակենտրոն ուսուցման սկզբունքների կիրառմանը պրակտիկայում՝ կարող ենք նշել, որ հայաստանյան բուհերում դեռևս տարածված է խորհրդային, ավանդական դասապրոցեսի կիրառումը: Խոսքը հատկապես վերաբերում է դասախոսությունների թելադրման մշակույթին: Իհարկե, բուհերում անցկացվում են քննարկումներ, կիրառվում են դասավանդման ինտերակտիվ մոդելներ, սակայն դա սահմանափակ բնույթ ունի:

Բացի այդ, դասավանդման գործընթացում օգտագործվում է հնացած գրականություն, իսկ վերջին ժամանակներում լույս տեսած աշխատությունների կիրառությունը սահմանափակ բնույթ է կրում: Այնուամենայնիվ, ըստ ուսանողների, դասախոսները որոշակի նորարարություններ կիրառում են, հետևում են իրենց ոլորտում տեղի ունեցող համաշխարհային ժամանակակից զարգացումներին: Դասավանդման առկա մոդելը, որոշակի սահմանափակումներով, խթանում է ուսանողների վերլուծական մտքի զարգացմանը:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են դասավանդման գործընթացի վերաբերյալ դատողությունների հետ հարցվածների համաձայնությունը կամ անհամաձայնությունը արտահայտող ցուցանիշները:

Աղյուսակ 7. Ուսանողների կարծիքները դասավանդման և ուսումնառության գործընթացի մասին (%)

	Համաձայն եմ	**Մասամբ համաձայն եմ**	**Համաձայն չեմ**	**Դժվարանում եմ պատասխանել**
Մեծ մասամբ դասախոսությունները թելադրվում են	44	33	16	7
Մեծ մասամբ քննարկումներ/ինտերակտիվ մոդել է կիրառվում	33	42	16	9
Կրթական ծրագրերում հնացած մասնագիտական գրականություն է ընդգրկված	28	35	26	11
Վերջին շրջանում լույս տեսած (հայկական, արևմտյան, ռուսական և այլ) մասնագիտական գրականությունից առավել արդի թեմաներ են ներառված	27	37	21	14
Դասախոսները որևէ նորարարություն չեն կիրառում	13	34	43	10
Դասախոսները հետևում են ակադեմիական ոլորտում տեղի ունեցող համաշխարհային զարգացումներին և նորարարություններին	33	39	15	13
Դասավանդման առկա մոդելը խթանում է ուսանողների վերլուծական մտքի զարգացմանը	28	35	20	16

Անդրադառնալով ուսանողների շահերը ներկայացնող կառույցներին՝ պետք է նշենք, որ ուսանողների կեսից ավելին (53%) գտնում է, որ բուհում գործող ուսանողական խորհուրդները բավական արդյունավետ են իրականացնում իրենց լիազորությունները: Յուրաքանչյուր 4-րդ հարցվողը (25%) դրանց գործունեությունը մասամբ արդյունավետ է համարել, և միայն հարցվողների 12%-ն է նշել, որ ուսանողական

խորհուրդները արդյունավետ կերպով չեն պաշտպանում ուսանողների իրավունքներն ու շահերը:

Հետաքրքիր է, որ անկախ ուսանողական միությունների և ուսանողների շահերը պաշտպանող ՀԿ-ների գործունեությունը, ուս. խորհուրդների հետ համեմատության մեջ, պակաս արդյունավետ է գնահատվել:

Հարցվածների 40%-ը նշել է, որ բուհի կառավարման մարմիններում ընդգրկված ուսանողներն ունեն բավարար տեղեկացվածություն և հմտություններ՝ ուսանողների շահերը պաշտպանելու համար: Հարցվածների 22%-ը հակառակ տեսակետն է հայտնել՝ նշելով տեղեկացվածության ու հմտությունների պակասի մասին, իսկ 38%-ն էլ դժվարացել է պատասխանել այս հարցին:

Երևանի ուսանողների 36.3%-ն է դժվարացել պատասխանել վերոնշյալ հարցին, իսկ մարզերի ուսանողների՝ 15%-ը: Այս էական տարբերությունը կարող է պայմանավորված լինել այն հանգամանքով, որ Երևանում, պայմանավորված ուսանողների մեծ թվաքանակով և այլ գործոններով, շատերը չեն ճանաչում բուհի կառավարման մարմիններում ընդգրկված ուսանողներին: Հետևաբար, դժվարանում են նրանց հմտություններն ու իրազեկվածությունը գնահատելու հարցում: Մինչդեռ մարզերում ուսանողական կառույցների գործունեությունն ավելի թափանցիկ է՝ պայմանավորված նաև համայնքային առավել ամուր և ճանաչելի կապերով:

Հաջորդ գծապատկերում ներկայացված է ուսանողների շահերի պաշտպանությանն ուղղված միջոցառումների իրավիճակը բուհերում:

Գծապատկեր 19. Ձեր բուհում երբևէ կատարվե՞լ է ստորագրահավաք (կամ այլ միջոցառում) ուսանողների այս կամ այն տեսակետը կառավարման մարմիններում ներկայացնելու համար (%)



Այսպիսով, հայաստանյան ուսանողության գրեթե մեկ երրորդը բոլոնյան համակարգի կարևորագույն բաղադրիչներից մեկը՝ ուսանողակենտրոն ուսուցումը, չի կարողացել սահմանել կամ մեկնաբանել:

Հետազոտության արդյունքները վկայում են, որ չնայած ուսանողակենտրոն ուսուցումը ենթադրում է ուսանողների դերի մեծացում՝ ուսումնական գործընթացը կազմակերպելիս, սակայն հայաստանյան պետական և ոչ պետական համալսարանների մեծ մասում ուսանողները սահմանափակ հնարավորություններ ունեն դասավանդվող առարկաների ընտրության և ուսումնական ծրագրերը կազմելու գործընթացում: Ուսանողակենտրոն ուսուցման ներդրման թերացումների մասին է վկայում նաև

այն, որ դասավանդման մեթոդների և ընդհանրապես ուսումնառության գործընթացի նորարարության առումով գրեթե փոփոխություններ չկան:

Մագիստրատուրայի ուսանողները դասավանդվող առարկաների ընտրության ավելի սահմանափակ հնարավորություններ ունեն, քան բակալավրիատի ուսանողները:

Մարզային ուսանողության զգալիորեն ավելի մեծ տոկոսն է (համեմատած Երևանի ուսանողների) նշել, որ չունի դասավանդվող առարկաների ընտրության որևէ հնարավորություն: Երևանի ուսանողների պատասխանների հետ էական տարբերությունը մտահոգիչ փաստ է, ինչը վկայում է մարզերում ուսանողակենտրոն ուսուցման առավել վատթար իրավիճակի մասին:

Ինչ վերաբերում է ուսանողների շահերի պաշտպանության արդյունավետությանը, ապա ուսանողները գտնում են, որ ուս. խորհուրդները բավական հաջող են գործում: Երևանի հարցվողների ավելի մեծ մասն է (համեմատած մարզերի հարցվողների) դժվարացել գնահատել բուհի կառավարման մարմիններում ընդգրկված ուսանողների տեղեկացվածությունն ու հմտությունները (ուսանողների շահերը պաշտպանելու տեսանկյունից):

Կարևոր է ընդգծել, որ ուսանողակենտրոն ուսուցումը միայն կրթական նպատակներ չի հետապնդում: Այս մոտեցումը նպաստում է ուսանողների ներգրավմանը՝ բոլոնյան համակարգի այլ բաղադրիչների ներդրման գործում: Ուսանողների ակտիվությունն ու մասնակցությունը կարող է հակակշռել բուհերի և դրանց դասախոսական կազմի պասիվ վարքագիծը, խթանող և վերահսկող նշանակություն ստանալ բուհի վարչական կազմի գործունեության նկատմամբ: Այլ կերպ ասած, համակարգի տարրերից մեկի (ուսանողակենտրոն ուսուցման) հաջող գործառնումը կարող է շղթայաբար նպաստել համակարգի այլ տարրերի ներդրմանն ու ամրապնդմանը:

6. Կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգ

Կրեդիտային համակարգի նպատակը (ինչպիսին է, օրինակ, Կրեդիտների փոխանցման եվրոպական համակարգը), հաստատությունների միջև փոխանակման դյուրինության խթանումն է՝ կրթական ձեռքբերումների ճանաչելիության և կրթական աստիճանների միջև ճկունությունն ապահովելու համար: Կրեդիտների փոխանցման եվրոպական համակարգը Բերգենի կոմյունիկեից հետո ծառայել է ոչ միայն որպես փոխանակման միջոց, այլ նաև բոլոր կրթական ծրագրերի շրջանակում որպես կուտակման գործիք: Ի սկզբանե կրեդիտները ներկայացվել են որպես ուսումնառության անմիջական շփման ժամեր, մինչդեռ հետագայում դրանք կատարելագործվել են և սկսել են հանդես գալ որպես տվյալ կրթական ծրագիրը լիարժեքորեն ուսումնասիրելու համար անհրաժեշտ ծանրաբեռնվածություն: Ի վերջո, այն սկսել է մեկնաբանվել որպես ակնկալվող վերջնարդյունքների համար անհրաժեշտ ծանրաբեռնվածություն: Այս փոփոխությունները բարձրագույն կրթության՝ որպես հարատև ուսումնառության հարացույցում տեղի ունեցող փոփոխությունների արդյունք են՝ ուսանողակենտրոն ուսուցման և կրթական վերջնարդյունքների հիման վրա ստեղծված որակավորումների շրջանակների համատեքստում:

Հարցմանը մասնակցած ուսանողների 70%-ը տեղյակ է բուհում գործող կրեդի-

տային համակարգի մասին, իսկ մնացած 30%-ն առհասարակ տեղյակ չէ կամ դժվարանում է պատասխանել: Հատկանշական է, որ երևանյան բուհերում այս հարցի շուրջ ուսանողների իրազեկվածության մակարդակն ավելի ցածր է (68.2%), քան մարզային բուհերի ուսանողներինը (90.5%):

Զարմանալի է, սակայն կրեդիտային համակարգի մասին տեղեկացվածության և ուսանողի կրթական փորձառության (կուրսի) միջև որևէ կապ չի նկատվում: Մինչդեռ ակնկալվող, դրական օրինաչափությունը պետք է վկայեր սովորելու տարիներին զուգահեռ՝ իրազեկվածության աճի մասին:

Գծապատկեր 20. Կրեդիտային համակարգի մասին տեղեկացվածության մակարդակը և ուսանողի կրթական փորձառությունը (կուրսը)



Հետաքրքիր է, որ կրեդիտային համակարգի մասին տեղյակ ուսանողների 48%-ը, այնուամենայնիվ, չգիտի, թե ինչ է կրեդիտը: Այսինքն, հարցվողների այս հատվածը թեև լսել է համակարգի մասին, բայց պատկերացում չունի դրա իրական բովանդակության վերաբերյալ: Համակարգից տեղյակ անձանց (նախորդ հարցին դրական պատասխանած 70% հարցվողների) միայն 52%-ն է պատասխանել, որ գիտի, թե ինչ է կրեդիտը:

Հետազոտության ընթացքում տրված հետագա հարցերը նույնպես ոչ միանշանակ պատկեր են բացահայտում: Այսպես, կրեդիտի մասին իր տեղեկացվածության վերաբերյալ դրական պատասխան տվածների զգալի մասը (37%-ը) դժվարացել է պատասխանել, թե ի վերջո, ինչ է կրեդիտը: 29%-ը կրեդիտը հասկանում է որպես տվյալ առարկայի համապատասխան միավոր կամ բալ: Հարցվողների միայն 9%-ի պատասխանն է («Առարկայի վրա ծախսված ժամաքանակ / Ծանրաբեռնվածություն») համեմատաբար մոտ կրեդիտի իրական բովանդակությանը:

Հաջորդիվ քննարկվել է կրեդիտային համակարգի շրջանակներում օբյեկտիվ գնահատման հարցը: Հարցվողների 49%-ն է համարում, որ այս համակարգն ամբողջությամբ կամ մասամբ օբյեկտիվ գնահատման հնարավորություն է ընձեռում: Հարցվածների մյուս կեսը կամ դժվարանում է պատասխանել (37%), կամ թերահավատ է գնահատման օբյեկտիվության հարցում (14%):

Հաջորդ գծապատկերում ներկայացված են Երևանի և մարզերի ուսանողների տեսակետներն այս հարցում: Ինչպես տեսնում ենք, մարզային ուսանողության շրջանում ավելի շատ են այն ուսանողները, որոնք գտնում են, որ կրեդիտային համակարգը օբյեկտիվ գնահատման լիակատար հնարավորություն է ընձեռում:

Գծապատկեր 21. Տալիս է արդյոք կրեդիտային համակարգը օբյեկտիվ գնահատման հնարավորություն



Ավարտական կուրսերի ուսանողներն այս հարցում ընդգծված բացասական տեսակետ ունեն, համեմատած ցածր կուրսերի ուսանողների հետ: Այսպես, եթե առաջինից 3-րդ կուրսերում հարցվողների առավելագույնը 20.6%-ն է նշել, որ կրեդիտային համակարգը չի տալիս օբյեկտիվ գնահատման հնարավորություն, ապա ավարտական՝ 4-րդ կուրսի ուսանողների 26.6%-ն է այդպես կարծում:

Եթե առաջինից 3-րդ կուրսերում հարցվողների շուրջ 22-27%-ն է կարծում, որ կրեդիտային համակարգը օբյեկտիվ գնահատման լիարժեք հնարավորություն է տալիս, ապա 4-րդ կուրսում այդ ցուցանիշը խիստ ցածր է՝ ընդամենը 6.3%:

Հետազոտության մասնակիցները պատասխանել են հավաքած կրեդիտների՝ իրենց գիտելիքների մակարդակին համապատասխանության հարցին: Արդյունքները ներկայացված են հաջորդ գծապատկերում:

Գծապատկեր 22. Որքանով են կրեդիտները համապատասխանում ձեր ձեռքբերած գիտելիքների աստիճանին



Ինչպես տեսնում ենք, հարցվածների մեծամասնությունը հակված է այն տարբերակին, որ կրեդիտների համապատասխանությունը գիտելիքին միայն մասամբ է ապահովվում:

Մագիստրատուրայի ուսանողների շրջանում շուրջ 3.5%-ով, համեմատած բա-

կալավրիատի ուսանողների, ցածր է այն հարցվողների տեսակարար կշիռը, ովքեր գտնում են, որ հավաքած կրեդիտները համարժեք են իրենց գիտելիքների իրական մակարդակին:

Կրեդիտների փոխանցման հնարավորությունից օգտվել է հարցվածների չնչին մասը՝ 7%-ը, չի օգտվել 55%-ը, իսկ մնացած մասն առհասարակ տեղյակ չէ դրա մասին: Երևանում այդ հնարավորությունից օգտված ուսանողների տեսակարար կշիռն ավելի բարձր է՝ 10.8%, իսկ մարզերում՝ 6.6%:

Բակալավրիատում և մագիստրատուրայում այդ հնարավորությունից օգտված ուսանողների տեսակարար կշիռը գրեթե նույնն է:

Կրեդիտների փոխանցման հնարավորության և ընթացակարգի մասին տեղեկացվածությունը ևս գտնվում է բավական ցածր մակարդակում: Հարցվածների ճնշող մեծամասնությունը՝ 90%-ը, տեղյակ չէ այդ հնարավորության մասին:

ՀՀ բուհերի միջև համագործակցության համար կրեդիտային համակարգը, ըստ հարցվողների 23 և 26 տոկոսների, ընձեռում է համապատասխանաբար լայն և որոշ հնարավորություններ: Հարցվողների 5%-ը կարծում են, որ կրեդիտային համակարգը նման հնարավորություն չի տալիս, իսկ գերակշռող մեծամասնությունը՝ 46%-ը, դժվարանում է պատասխանել հարցին: Նույն պատկերն է պահպանվում արտասահմանյան բուհերի հետ համագործակցության հնարավորությունների քննարկման ժամանակ: Հարցվածների 17%-ը կարծում են, որ համակարգը տալիս է լայն հնարավորություններ, 26%-ի կարծիքով՝ կան որոշ հնարավորութուններ, 6%-ը չի տեսնում որևէ հնարավորություն, իսկ 51%-ը դժվարանում է պատասխանել հարցին:

Կրթական վերջնարդյունք հասկացության մասին իրազեկված լինելու վերաբերյալ դրական պատասխան են տվել հարցվածների միայն 25%-ը, բացասական՝ 75%-ը: Իսկ թե «այո» պատասխանած 25%-ից քանիսն են ճիշտ մեկնաբանում կրթական վերջնաարդյունքը, պարզ է դառնում հետևյալ գծապատկերից.

Գծապատկեր 23. Ինչ է կրթական վերջնարդյունքը



Ինչպես տեսնում ենք, հարցվողների զգալի մասը՝ 46%-ը, թեև նախորդ հարցին ի պատասխան նշել էր, որ գիտի, թե ինչ է կրթական վերջնարդյունքը, միևնույն է, դժվարանում է մեկնաբանել այն: Իսկ մեկնաբանության ներկայացված տարբերակներն էլ խիստ բազմազան են ու հակասական:

Հայաստանյան ուսանողների մեկ երրորդն ի սկզբանե նշել է, որ տեղյակ չէ՝ իր բուհում գործում է կրեդիտային գնահատման համակարգ, թե ոչ: Միևնույն ժամանակ, այն ուսանողները, ովքեր նշել են, որ տեղյակ են համակարգից, մեծամասամբ այն սահմանել են որպես գնահատման միավոր/բալ: Ինչ վերաբերում է կրեդիտների փոխանցմանը, ապա հարցման ենթարկվածների 90 տոկոսը որևէ պատկերացում չի ունեցել այդ գործընթացի մասին: Կրթական վերջնարդյունքն էլ հիմնականում սահմանվել է որպես միջին որակավորման գործակից, որպես դիպլոմ, որպես ձեռքբերված գիտելիքներ, և այլն:

Այս արդյունքները վկայում են ուսանողների իրազեկվածության բարձրացման միջոցառումների անհրաժեշտությունը: Համակարգի ներդրման ակնհայտ թերություններից է այն, որ ուսանողները, մի քանի տարի սովորելով բուհում, նույնիսկ պատկերացում չունեն իրենց կրթական վերջնարդյունքների կամ ընդհանրապես այն համակարգի մասին, որում կրթություն են ստանում:

Զարմանալի է, սակայն կրեդիտային համակարգի մասին տեղեկացվածության և ուսանողի կրթական փորձառության (կուրսի) միջև որևէ կապ չի նկատվում: Մինչդեռ ակնկալվող, դրական օրինաչափությունը պետք է վկայեր սովորելու տարիներին զուգահեռ՝ իրազեկվածության աճի մասին:

Ավարտական կուրսերի ուսանողները, համեմատած ցածր կուրսերի ուսանողների հետ, ընդգծված բացասական տեսակետ ունեն այն հարցում, թե արդյոք կրեդիտային համակարգը օբյեկտիվ գնահատման հնարավորություն է տալիս: Մագիստրատուրայի ուսանողների շրջանում, համեմատած բակալավրիատի ուսանողների, ցածր է այն հարցվողների տեսակարար կշիռը, որոնք գտնում են, որ հավաքած կրեդիտները համարժեք են իրենց գիտելիքների իրական մակարդակին:

7. Որակի ապահովման գործընթաց

Բոլոնյան գործընթացի կարևորագույն սկզբունքներից և Եվրոպական բարձրագույն կրթական տարածաշրջանի կայացման կարևոր նախապայմաններից է եվրոպական համագործակցության խորացումը՝ որակի ապահովման գործընթացում: Որակի ապահովումն ինքնին բազմաթիվ նպատակներ ունի, որոնցից կարևորներն են՝ ուսուցման և ուսումնառության շրջանակների ընդլայնումը, բարձրագույն կրթության ոլորտի դերակատարների միջև փոխադարձ վստահության մակարդակի բարձրացումը, որակավորումների համեմատելիության ապահովումը և այլն: Բացի այդ, որակի ապահովումը նպատակ ունի բարձրագույն կրթական հաստատությունները դարձնելու հաշվետու, ինչպես նաև՝ ապահովելու անհրաժեշտ և բավարար տեղեկատվություն վերջիններիս գործունեության վերաբերյալ:

Հարցմանը մասնակցած ուսանողների ընդամենը 19%-ն է տեղյակ մասնագիտական կրթության որակի ապահովման գործընթացից, իսկ զգալի մեծամասնությունը՝ 81%-ը, առհասարակ տեղյակ չէ: Վերլուծելով հարցվածների տեղեկացվածությունն ըստ բուհերի՝ նկատում ենք, որ մայրաքաղաքում գտնվող բուհերի ուսանողներն առավել իրազեկ են:

Հաջորդ գծապատկերում ներկայացված են ուսանողների պատկերացումները/ընկալումները որակի ապահովման գործընթացի վերաբերյալ:

Գծապատկեր 24. Տեսակետներ կրթության որակի ապահովման գործընթացի վերաբերյալ[4] (%)



Վերը բերված գծապատկերից պարզ է դառնում, որ հարցվածների բացարձակ մեծամասնությունը չի պատկերացնում այդ գործընթացը և դժվարանում է որևէ կերպ մեկնաբանել այն, իսկ 11%-ն էլ մեկնաբանության մեջ կիրառում է միևնույն հասկացությունները («որակ յալ կրթություն», «որակի բարելավում»):

Հարցվածների 44%-ն է նշել, որ ուսանողները ներգրավված են որակի ապահովման գործընթացում: Զարմանալի է այն հանգամանքը, որ մարզերում այս ցուցանիշն էականորեն ավելի բարձր է: Ուսանողների ընդգրկվածության մասին նշել է մարզերի ուսանողների 57.9%-ը, իսկ Երևանում՝ շուրջ 20%-ով ավելի ցածր՝ հարցվողների 37.5%-ը:

Մագիստրատուրայի ուսանողների 53.2%-ն է նշել, որ ուսանողները նեգրավված են որակի ապահովման գործընթացում: Բակալավրիատի հարցվողների շրջանում այդ ցուցանիշը կազմել է մոտ 44%: Այսպիսով, մագիստրատուրայում մասնակցային գործընթացի հնարավորությունները կարծես թե ավելի լայն են:

Առավել իրազեկ ուսանողները գործընթացին մասնակություն ունեցողներն են՝ հիմնականում ուսանողական խորհուրդների ներկայացուցիչներ, ովքեր մասնակցել են ինքնագնահատմանը: Զարմանալի է այն փաստը, որ կրթական ավելի բարձր աստիճանների ներկայացուցիչները (ասպիրանտները) պակաս իրազեկ են որակի ապահովման գործընթացից: Ուսանողների ընդամենը 1/5-րդ մասն է նշել, որ տեղյակ է այդ գործընթացից, սակայն վերջիններիս զգալի մեծամասնությունն էլ չի կարողացել այն սահմանել:

8. Հարատև ուսումնառություն

Հարատև ուսումնառության կարելի է հասնել տարբեր ուղիներով, ներառյալ՝ ճկուն ուսումնառությամբ և աշխատանքի վրա հիմնված (հեռակա) ուսուցմամբ: Սա բարձրագույն կրթության համակարգում ուսանողների մասնակցության ընդլայնման կարևորագույն նախապայմաններից է: 2009 թվականին եվրոպական նախարարները

[4] Պատասխանները, որոնց հանդիպման հաճախականությունը չի գերազանցում 1 տոկոսը, ներկայացված չեն:

մատնանշեցին, որ հարատև ուսումնառության քաղաքականությունը պետք է իրականացվի հանրային մարմինների, բարձրագույն կրթական հաստատությունների, ուսանողների, գործատուների միջև ակտիվ համագործակցության շրջանակներում:

Տարբեր շահառու կողմեր հարատև ուսումնառությունը տարբեր կերպ են մեկնաբանում՝ նշելով, օրինակ, որ դա քաղաքացիներին ինքնակատարելագործման, սոցիալական ինտեգրացիայի և գիտելիքահենք տնտեսությունում մասնակցություն ունենալու հնարավորությունների տրամադրման գործընթացն է:

Հարցվածների մեծամասնությունը չունի տեղեկացվածություն հարատև ուսումնառության մասին, նրանց միայն 23%-ն է նշել, որ տեղյակ է դրա բովանդակությանը: Այս անձանց ուղղված հարցերի միջոցով ստացվել են հարատև ուսումնառության գաղափարի մեկնաբանության հետևյալ տարբերակները.

Գծապատկեր 25. Տեսակետներ հարատև ուսումնառության վերաբերյալ[5] (%)



Այսպիսով, չնայած նախորդ հարցին դրական պատասխանին (այն մասին, որ իրազեկված են հարատև ուսումնառության մասին), հարցվողների կեսից ավելին դժվարացել է մեկնաբանել այն:

Ինչպես նախորդ՝ որակի ապահովման գործընթացի մասին տեղեկացվածության դեպքում, հարատև ուսումնառության մասին ևս որոշ առավելությամբ ավելի տեղեկացված են Երևանում գտնվող բուհերի ուսանողները, իսկ մարզային որոշ բուհերում տեղեկացվածությունն առհասարակ բացակայում է: Տեղեկացվածությունը գրեթե նույն համամասնությամբ է բաշխված կրթական բոլոր երեք աստիճաններում:

9. Հեռանկարներ

Ստորև բերված գծապատկերում ներկայացված են հարցվողների տեսակետներն այն մասին, թե արդյոք բուհը բավարար քանակությամբ պրակտիկ գիտելիքներ է տրամադրում ավարտելուց հետո աշխատանք գտնելու համար:

[5] Պատասխանները, որոնց հանդիպման հաճախականությունը չի գերազանցում 1 տոկոսը, ներկայացված չեն:

Գծապատկեր 26. Բուհը բավարար քանակությամբ պրակտիկ գիտելիքներ տրամադրում է ավարտելուց հետո աշխատանք գտնելու համար



Հետաքրքիր է, որ մարզերի ուսանողներն առավել լավատես են այս հարցում. 10%-ով ավելի է այն ուսանողների տեսակարար կշիռը, որոնք համարում են, որ բուհը բավարար պրակտիկ գիտելիքներ է տրամադրում: Հաջորդ աղյուսակում ներկայացված են մարզերի և Երևանի ուսանողների տեսակետներն այս հարցում:

Աղյուսակ 8. Բուհը բավարար քանակությամբ պրակտիկ գիտելիքներ տրամադրում է ավարտելուց հետո աշխատանք գտնելու համար (Երևան և մարզեր)

	Այո, տրամադրում է	Մասամբ է տրամադրում	Ոչ, չի տրամադրում	Դժվարանում եմ պատասխանել
Երևան	37.9%	45.4%	13.6%	3.1%
Մարզեր	48%	37.1%	14.6%	0.3%

Այս հարցի շուրջ տեսակետների շեշտակի տարբերություններ են նկատվում ըստ կրթական աստիճանների: Օրինակ, մագիստրատուրայում զգալիորեն քիչ է այն ուսանողների տեսակարար կշիռը (ընդամենը՝ 29.4%), որոնք կարծում են, որ բուհը բավարար քանակությամբ պրակտիկ գիտելիքներ է տրամադրում:

Գծապատկեր 27. Բուհը բավարար քանակությամբ պրակտիկ գիտելիքներ տրամադրում է ավարտելուց հետո աշխատանք գտնելու համար (բակալավրիատ և մագիստրատուրա)



Հաջորդ կարևոր խնդիրը վերաբերում է այն հարցին, թե բուհն ավարտելուց հետո ինչ հնարավոր մասնագիտական աշխատատեղի կարող են դիմել շրջանավարտները:

Հարցվողների 47.3%-ն է նշել, որ գիտի, թե ավարտելուց հետո որտեղ կարող է դիմել աշխատանքի համար: 39.8%-ն ասել է, որ մասամբ գիտի, թե ուր կարող է դիմել, իսկ 10.5%-ը նշել է, որ դեռ չի կողմնորոշվել:

Կրկին հետաքրքիր և անկանխատեսելի պատկեր է ստացվել մարզերի հարցվողների շրջանում: Նրանց մեծ մասն է նշել իր կողմնորոշվածության մասին, ի տարբերություն Երևանում սովորող ուսանողների:

Աղյուսակ 9. Արդեն գիտե՞ք, թե բուհն ավարտելուց հետո ինչ հնարավոր մասնագիտական աշխատատեղի կարող եք դիմել (Երևան և մարզեր)

	Այո, արդեն գիտեմ	Մասամբ գիտեմ	Դեռ չեմ որոշել	Դժվարանում եմ պատասխանել
Երևան	42.8%	43.4%	10.9%	2.9%
Մարզեր	61.8%	28.2%	9.4%	0.6%

Դրական է այն հանգամանքը, որ մագիստրատուրայի ուսանողներն այս հարցում առավել կողմնորոշված են:

Աղյուսակ 10. Արդեն գիտե՞ք, թե բուհն ավարտելուց հետո ինչ հնարավոր մասնագիտական աշխատատեղի կարող եք դիմել (բակալավրիատ և մագիստրատուրա)

	Այո, արդեն գիտեմ	Մասամբ գիտեմ	Դեռ չեմ որոշել	Դժվարանում եմ պատասխանել
Բակալավրիատ	45.4%	41.1%	10.6%	2.9%
Մագիստրատուրա	55.5%	34.1%	9.4%	1%

Վերջապես, այս հարցի շուրջ մտահոգիչ արդյունքներ են ստացվել ըստ ուսանողների կրթական փորձառության (կուրսի):

Աղյուսակ 11. Արդեն գիտե՞ք, թե բուհն ավարտելուց հետո ինչ հնարավոր մասնագիտական աշխատատեղի կարող եք դիմել (բակալավրիատի և մագիստրատուրայի կուրսեր)

	Կուրս	Այո, արդեն գիտեմ	Մասամբ գիտեմ	Դեռ չեմ որոշել	Դժվարանում եմ պատասխանել
Բակալավրիատ	1	43.2%	41.6%	11.9%	3.3%
	2	47.5%	39.2%	11.3%	2%
	3	47.4%	40.6%	9.7%	2.3%
	4	41.9%	47.3%	8.6%	2.2%
Մագիստրատուրա	1	73%	23.9%	1.6%	1.6%
	2	66.7%	28.2%	5.1%	0%

Ինչպես ակնհայտ է բերված աղյուսակից, թե՛ բակալավրիատի, թե՛ մագիստրատուրայի ավարտական կուրսերում մասնագիտական աշխատանքի դիմելու որոշակիությունն ավելի ցածր է, քան ցածր կուրսերում: Այս ցուցանիշը կարելի է բացատրել նրանով, որ ավարտական կուրսերում մասնագիտական աշխատանքի հնարավորության վերաբերյալ պատկերացումներն ավելի իրատեսական են, առավել չափով են հիմնված փորձի ու օբյեկտիվ տեղեկատվության վրա, քան նախորդ կուրսերում: Հնարավոր է, ցածր կուրսերում մասնագիտական աշխատանքի մասին պատկերացումները պակաս իրատեսական են և համակարգված բնույթ չունեն:

Ամփոփում

Հայաստանը, 2005 թվականից անդամակցելով Բոլոնյան գործընթացին, ձեռնամուխ է եղել կրթության և հատկապես բարձրագույն կրթության ոլորտում մի շարք արմատական բարեփոխումների իրականացմանը: Այսօր բարձրագույն կրթության ոլորտի պատասխանատուները մատնանշում են համակարգի արդյունավետ ներդրման կարևորությունը և փաստում են, որ Հայաստանում այդ գործընթացն իրականացվում է բավարար մակարդակով: Այնուամենայնիվ, ինչպես վկայում են մի շարք հետազոտություններ և փորձագետներ, ուսանողներն այդ գործընթացի բավական թերություններ են մատնանշում:

Բոլոնյան համակարգը հայաստանցի ուսանողների պատկերացմամբ հավասարեցվում է կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգին: Սա էլ իր հերթին ընկալվում է որպես զուտ բալային գնահատման համակարգ: Մեծ է նաև այն ուսանողների թիվը, որոնք բոլոնյան համակարգը նույնացրել են որակի ապահովման և ուսանողակենտրոն ուսուցման հետ: Վերջապես, աննշան է այն ուսանողների թիվը, ովքեր բոլոնյան համակարգը նկարագրել են ըստ իր իրական, առանցքային բաղադրիչների:

Հետազոտության մասնակից ուսանողները բոլոնյան համակարգի ազդեցության վերաբերյալ իրարամերժ տեսակետներ են հայտնել: Օրինակ, թեև գերակշռող է այն տեսակետը, որ բոլոնյան համակարգը խորքային և էական փոփոխություններ է մտցրել ՀՀ բարձրագույն կրթական համակարգում (57%), մյուս կողմից, զգալի է այն ուսանողների թիվը (30%), որոնք հակառակ տեսակետն ունեն: Զգալի է նաև այն ուսանողների թիվը, որոնք դժվարացել են իրենց վերաբերմունքը հայտնել բոլոնյան համակարգի վերաբերյալ այս և նմանատիպ դատողությունների մասին: Հստակ դիրքորոշման/տեսակետի բացակայությունը նույնպես բացասական երևույթ է, ինչը վկայում է կամ ուսանողների անտարբերության, կամ իրազեկվածության ցածր մակարդակի մասին:

Բակալավրիատի ուսանողները, համեմատած մագիստրատուրայի ուսանողների, ավելի բարձր են գնահատում բոլոնյան համակարգի բերած փոփոխությունները: Գրեթե 10%-ով մեծ է մագիստրատուրայի այն ուսանողների տեսակարար կշիռը, որոնք գտնում են, որ բոլոնյան համակարգի ներդրումը միայն մակերեսային փոփոխություններ է մտցրել:

Հնարավոր է, պատկերացումների այս տարբերությունը պայմանավորված է մագիստրատուրայի ուսանողների՝ համակարգի բացերը ճանաչելու առավել մեծ փորձառությամբ և կրթության որակի նկատմամբ առաջադրվող առավել բարձր պահանջներով:

Կա հստակ օրինաչափություն. ուսումնառության տարիներին զուգընթաց՝ նվազում է այն ուսանողների տեսակարար կշիռը, որոնք դրական ընկալում ունեն բոլոնյան համակարգի ազդեցության վերաբերյալ: Թե՛ բակալավրիատի, թե՛ մագիստրատուրայի ավարտական կուրսերում, համեմատած ցածր կուրսերի, ավելի բարձր է այն ուսանողների տեսակարար կշիռը, որոնք բոլոնյան համակարգի ներդրումը մակերեսային, ոչ էական փոփոխություն են համարում:

Հարցվողների մեծամասնությունը գտնում է, որ առավել էական փոփոխությունները, որին հանգեցրել է բոլոնյան համակարգի ներդրումը, ուսանողի ինքնուրույնու-

թյան և դերի բարձրացումն է, ուսանողների միջև մրցակցության խթանումը, կրթության որակի բարելավումը, ինչպես նաև՝ կոռուպցիոն երևույթների նվազումը: Հարցվողների գրեթե կեսը գտնում է, որ համակարգը մասամբ ազդել է ուսանողների գիտելիքների օբյեկտիվ գնահատման մեխանիզմի վրա:

Բոլոնյան կրթական համակարգի ներդրումը, նպատակ ունենալով Հայաստանը ինտեգրել եվրոպական բարձրագույն կրթական տարածաշրջանին, ըստ ուսանողների՝ դեռևս ամբողջությամբ չի իրագործվել ոչ թե համակարգի լավ կամ վատ լինելու պատճառով, այլ ներդրման գործընթացի իրականացման որակից ելնելով: Որպես հետևանք, ուսանողների կարծիքով, ՀՀ բարձրագույն կրթությունը դեռևս չի համապատասխանում միջազգային չափանիշներին:

Ուսանողները բավարար պատկերացում չունեն եռաստիճան կրթական համակարգի ընձեռած հնարավորությունների մասին: Ուսանողների մեծ մասը եռաստիճան կրթական համակարգը դիտարկում է որպես կրթությունը խորացնելու, մասնագիտացումը փոփոխելու, այլ երկրներում ուսումը շարունակելու լավ հնարավորություն:

Բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերում, ըստ մագիստրատուրայի ուսանողների մեծամասնության, մասամբ առկա են կրկնություններ: Նրանց միայն 18.3%-ն է նշել ծրագրերի՝ ամբողջությամբ տարբեր լինելու մասին: Մագիստրատուրայի ուսանողների փոքր մասն է (յուրաքանչյուր 5-րդ հարցվողը) միայն նշել, որ նկատվում է դասավանդման մեթոդների էական փոփոխություն: Հարցվողների զգալի մասը կարծում է, որ բակալավրիատում և մագիստրատուրայում դասավանդման մեթոդների էական փոփոխություն չկա:

Մագիստրատուրայի երկրորդ կուրսում, համեմատած առաջին կուրսի, ավելի մեծ տեսակարար կշիռ ունեն այն հարցվողները, որոնց կարծիքով, ծրագրերում շատ են կրկնությունները, ինչպես նաև՝ ավելի մեծ տոկոս են կազմում այն ուսանողները, որոնք գտնում են, որ բակալավրիատում և մագիստրատուրայում դասավանդման մեթոդների միջև էական փոփոխություններ չկան:

Ընկալման այս տարբերությունը, հնարավոր է, պայմանավորված է այն հանգամանքով, որ ուսանողի փորձառության աճին զուգահեռ՝ աճում է քննադատական մոտեցման և ճշգրիտ, փորձի վրա հիմնված գնահատական ձևավորելու հնարավորությունը:

Բակալավրի կրթաստիճանում սովորող ուսանողների մեծ մասի ցանկությունը՝ շարունակելու կրթությունը մագիստրատուրայում՝ «աշխատանք ավելի հեշտ գտնելու նպատակով», թույլ է տալիս եզրակացնել, որ Հայաստանում դեռևս բակալավրի աստիճանը դիտարկվում է որպես «թերի» և «ոչ լիարժեք» բարձրագույն կրթություն: Բնականաբար, այս մոտեցումը չի համապատասխանում բոլոնյան համակարգի հիմնական սկզբունքներին և համակարգի թյուր մեկնաբանության հետևանք է:

Կրթական շարժունության վերաբերյալ ուսանողների տեղեկացվածությունը բավական ցածր է: Ուսանողների մեծամասնությունը տեղյակ չէ բոլոնյան համակարգի այս կարևորագույն բաղադրիչներից մեկից: Հարցվողների մեծամասնության կարծիքով, կրթական շարժունությունը ՀՀ բուհերում և արտերկրում մասամբ է ապահովված:

Ըստ ուսանողների մեծամասնության՝ սոցիալական ոչ բոլոր շերտերն ունեն հավասար հնարավորություններ բարձրագույն կրթական համակարգում ընդգրկվելու համար: Առավել պաշտպանվածության կարիք ունեն հատուկ կարիքավոր և անապահով ընտանիքների ուսանողները: Ուսանողները նշել են, որ հարաբերականորեն

պաշտպանված են ազգային, սեռական ու կրոնական փոքրամասնությունների, նաև՝ մեծահասակ ուսանողների շահերը:

Հետազոտությանը մասնակցած աղջիկների շրջանում, համեմատած տղաների, զգալիորեն մեծ է (մոտ 11%-ով) այն հարցվողների տեսակարար կշիռը, ովքեր գտնում են, որ սեռերի միջև տարբերություն չի դրվում մագիստրատուրայի ընդունելության հարցում: Երկու սեռի հարցվողների շրջանում էլ ավելի մեծ թիվ են կազմում այն հարցվողները, որոնք նշել են ասպիրանտուրայի ընդունելության ընթացքում աղջիկներին տրվող նախապատվության մասին:

Դասավանդվող առարկաների ընտրության տեսանկյունից հայաստանյան բուհերը կամ սահմանափակ հնարավորություն են տալիս ուսանողներին, կամ՝ չկա ընտրության որևէ հնարավորություն: Ուսումնական ծրագրերի կազմման աշխատանքներում ևս ուսանողները կամ սահմանափակ մասնակցություն ունեն, կամ ընդհանրապես չունեն նման հնարավորություն:

Մարզային ուսանողության զգալիորեն ավելի մեծ տոկոսն է (համեմատած Երևանի ուսանողների) նշել, որ չունի դասավանդվող առարկաների ընտրության որևէ հնարավորություն: Երևանի ուսանողների պատասխանների հետ էական տարբերությունը մտահոգիչ փաստ է, ինչը վկայում է մարզերում ուսանողակենտրոն ուսուցման առավել վատթար իրավիճակի մասին:

Մագիստրատուրայի ուսանողները դասավանդվող առարկաների ընտրության ավելի սահմանափակ հնարավորություններ ունեն, քան բակալավրիատի ուսանողները:

Հայաստանյան բուհերում դեռևս տարածված է խորհրդային, ավանդական դասապրոցեսի կիրառումը, գործում է դասախոսությունների թելադրման մշակույթը: Իհարկե, բուհերում անցկացվում են քննարկումներ, կիրառվում են դասավանդման ինտերակտիվ մոդելներ, սակայն դա սահմանափակ բնույթ ունի: Դասավանդման գործընթացում օգտագործվում է հնացած գրականություն, իսկ վերջին ժամանակներում լույս տեսած աշխատությունների կիրառությունը սահմանափակ բնույթ է կրում:

Ուսանողների կեսից ավելին (53%) գտնում է, որ բուհում գործող ուսանողական խորհուրդները բավական արդյունավետ են իրականացնում իրենց լիազորությունները: Երևանի հարցվողների ավելի մեծ մասն է (համեմատած մարզերի հարցվողների) դժվարացել գնահատել բուհի կառավարման մարմիններում ընդգրկված ուսանողների տեղեկացվածությունն ու հմտությունները (ուսանողների շահերը պաշտպանելու տեսանկյունից): Հնարավոր է, այս տարբերությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ Երևանում, ուսանողների մեծ թվաքանակի պատճառով, շատերը չեն ճանաչում բուհի կառավարման մարմիններում ընդգրկված ուսանողներին: Հետևաբար, դժվարանում են նրանց հմտություններն ու իրազեկվածությունը գնահատելու հարցում: Մինչդեռ մարզերում ուսանողական կառույցների գործունեությունն ավելի թափանցիկ է՝ պայմանավորված նաև համայնքային առավել ամուր և ճանաչելի կապերով:

Կրեդիտային համակարգի մասին տեղյակ ուսանողների գրեթե կեսը, այնուամենայնիվ, չգիտի, թե ինչ է կրեդիտը: Այսինքն, հարցվողների այս հատվածը թեև լսել է համակարգի մասին, բայց պատկերացում չունի դրա իրական բովանդակության վերաբերյալ: Հարցվողների զգալի մասը կրեդիտը հասկանում է որպես տվյալ առարկայի համապատասխան միավոր կամ բալ:

Կրեդիտների փոխանցման հնարավորության և ընթացակարգի մասին տեղե-

կացվածությունը ևս գտնվում է բավական ցածր մակարդակում: Հարցվածների ճնշող մեծամասնությունը՝ 90%-ը, տեղյակ չէ այդ հնարավորության մասին: Հարցվողների գերակշիռ մեծամասնությունը դժվարանում է մեկնաբանել «կրթական վերջնարդյունք» հասկացության իմաստը: Կրթական վերջնարդյունքը հիմնականում սահմանվել է որպես միջին որակավորման գործակից, որպես դիպլոմ, որպես ձեռքբերված գիտելիքներ, և այլն:

Զարմանալի է, սակայն կրեդիտային համակարգի մասին տեղեկացվածության և ուսանողի կրթական փորձառության (կուրսի) միջև որևէ կապ չի նկատվում: Մինչդեռ ակնկալվող, դրական օրինաչափությունը պետք է վկայեր սովորելու տարիներին զուգահեռ՝ իրազեկվածության աճի մասին:

Ավարտական կուրսերի ուսանողները, համեմատած ցածր կուրսերի ուսանողների հետ, ընդգծված բացասական տեսակետ ունեն այն հարցում, թե արդյոք կրեդիտային համակարգը օբյեկտիվ գնահատման հնարավորություն է տալիս: Մագիստրատուրայի ուսանողների շրջանում, համեմատած բակալավրիատի ուսանողների, ցածր է այն հարցվողների տեսակարար կշիռը, որոնք գտնում են, որ հավաքած կրեդիտները համարժեք են իրենց գիտելիքների իրական մակարդակին:

Ուսանողների ընդամենը 1/5-րդ մասն է նշել, որ տեղյակ է իրենց բուհում որակի ապահովման գործընթացից, սակայն վերջիններիս զգալի մեծամասնությունն էլ չի կարողացել դրա էությունը ներկայացնել:

Մագիստրատուրայի ուսանողների ավելի մեծ տոկոսն է նշել, որ ուսանողները նեգրավված են որակի ապահովման գործընթացում: Մագիստրատուրայում մասնակցային գործընթացի հնարավորություններն ուսանողների համար կարծես թե ավելի շատ են:

Հարցվածների մեծամասնությունը չունի տեղեկացվածություն հարատև ուսումնառության մասին, նրանց միայն 23%-ն է նշել, որ տեղյակ է դրա բովանդակությանը:

Մարզերի ուսանողների շրջանում առավել մեծ է այն հարցվողների տոկոսը, որոնք նշել են, որ բուհը բավարար պրակտիկ գիտելիքներ է տրամադրում՝ հետագայում աշխատանք գտնելու համար:

Այս հարցի շուրջ տեսակետների շեշտակի տարբերություններ են նկատվում ըստ կրթական աստիճանների: Մագիստրատուրայում զգալիորեն քիչ է այն ուսանողների տեսակարար կշիռը (ընդամենը՝ 29.4%), որոնք կարծում են, որ բուհը բավարար քանակությամբ պրակտիկ գիտելիքներ է տրամադրում:

Հարցվողների 47.3%-ն է նշել, որ գիտի, թե ավարտելուց հետո որտեղ կարող է դիմել աշխատանքի համար: 39.8%-ն ասել է, որ մասամբ գիտի, թե ուր կարող է դիմել, իսկ 10.5%-ը նշել է, որ դեռ չի կողմնորոշվել:

Թե՛ բակալավրիատի, թե՛ մագիստրատուրայի ավարտական կուրսերում մասնագիտական աշխատանքի դիմելու որոշակիությունն ավելի թույլ է, քան ցածր կուրսերում: Այս ցուցանիշը կարելի է բացատրել նրանով, որ ավարտական կուրսերում մասնագիտական աշխատանքի հնարավորության վերաբերյալ պատկերացումներն ավելի իրատեսական են, առավել չափով են հիմնված փորձի ու օբյեկտիվ տեղեկատվության վրա, քան նախորդ կուրսերում: Հնարավոր է, ցածր կուրսերում մասնագիտական աշխատանքի մասին պատկերացումները պակաս իրատեսական են և համակարգված բնույթ չունեն:

Առաջարկություններ

1. Անհրաժեշտ են մեծածավալ բովանդակային միջոցառումներ՝ ուղղված բոլոնյան համակարգի հնարավորինս արագ կատարելագործմանը, և միջազգային չափորոշիչներին հայաստանյան կրթության համապատասխանեցմանը: Բուհերը չպետք է միայնակ լինեն այս գործընթացում. անհրաժեշտ է պետական մակարդակով աջակցություն, որը պետք է լինի ոչ միայն օրենսդրության ապահովման տեսքով:

2. Ուսանողների շրջանում բոլոնյան համակարգի, դրա առանձին բաղադրիչների և ընձեռած հնարավորությունների վերաբերյալ իրազեկվածության բարձրացման խիստ անհրաժեշտություն է զգացվում: Դրա համար հարկավոր է ակտիվացնել բուհերի, հատկապես, որակի ապահովման կենտրոնների գործունեությունը. ուսանողների շրջանում սեմինարներ և քննարկումներ կազմակերպել՝ համակարգը հանրամատչելի կերպով ներկայացնելու համար: Կարծում ենք նաև, որ բուհերում անհրաժեշտ է իրազեկվածության բարձրացման միջոցառումներ անցկացնել պրոֆեսորադասախոսական անձնակազմի շրջանում:

3. Ուսանողների և դասախոսների իրազեկվածության բարձրացման միջոցառումներում կարևոր է ոչ միայն տեղեկատվության փոխանցումը, այլև՝ որոշակի կարծրացած պատկերացումների փոփոխությունը: Խնդիրների զգալի մասը վերաբերում է ոչ այնքան տեղեկատվության բացակայությանը, որքան՝ դրա կամայական և ոչ ճիշտ մեկնաբանությանը: Կարծում ենք, պարզ և հանրամատչելի տեղեկատվական գրքույկները պահանջված կլինեն այս գործում:

4. Անհրաժեշտ է հստակեցնել բոլոնյան համակարգի իրազեկման գործում ֆակուլտետների և ամբիոնների դերը: Ուսանողներն ու դասախոսները պետք է հստակ պատկերացում ունենան այն մասին, թե իրենց ֆակուլտետում ով է իրազեկման պատասխանատուն և ինչպես կարող են տեղեկատվություն ու լրացուցիչ պարզաբանումներ ստանալ նրանից:

5. Բոլոնյան համակարգի վերաբերյալ իրազեկումը պետք է հիմնված լինի ուսանողական տարբեր խմբերի կարիքների գնահատման վրա: Ինչպես ցույց տվեց այս հետազոտությունը, մարզերի և Երևանի, բակալավրիատի և մագիստրատուրայի, ինչպես նաև՝ կրթական տարբեր մակարդակների (կուրսերի) ուսանողների պատկերացումների ու իրազեկվածության զգալի տարբերություններ կան: Արդյունավետ իրազեկման համար հարկավոր է հաշվի առնել ուսանողական յուրաքանչյուր խմբի սոցիալական և տեղային (մարզային, ներբուհական, մասնագիտական) առանձնահատկությունները:

6. Կարծում ենք, ուսանողների դերի մեծացումը կրթական ծրագրերի կազմման գործընթացում էապես կարող է ազդել վերոնշյալ խնդիրների լուծման վրա: Կարևոր է հասկանալ, որ ուսանողակենտրոն ուսուցումը միայն կրթական նպատակներ չի հետապնդում: Այս մոտեցումը նպաստում է ուսանողների ներգրավմանը՝ բոլոնյան համակարգի այլ բաղադրիչների ներդրման գործում: Ուսանողների ակտիվությունն ու մասնակցությունը կարող է հակակշռել բոլոնյան գործընթացի պատասխանատուների պասիվ վարքագիծը, խթանող և վերահսկող նշանակություն ստանալ բուհի վարչական կազմի գործունեության նկատմամբ: Այլ կերպ ասած, համակարգի տարրերից մեկի (ուսանողակենտրոն ուսուցման) հաջող գործառնումը կարող է շղթայաբար նպաստել բոլոնյան համակարգի այլ տարրերի ամրապնդմանը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Դասախոսների որակավորման բարձրացման միջոցառումների որակն ու արդյունավետությունը (ԵՊՀ օրինակով), Ա. Անափիոսյան, Հ. Հովհաննիսյան, Ա. Մեջլումյան, Երևան, 2015:
2. «Հայաստանի Հանրապետության օրենքը կրթության մասին», ընդունված՝ 14.04.1999:
3. «ՀՀ օրենքը բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», ընդունված՝ 14.12.2004:
4. ՀՈՒԱԱ հայեցակարգային փաստաթղթեր՝
   i. Բարձրագույն կրթության ֆինանսավորում (2012):
   ii. Հավասար հնարավորություններ բարձրագույն կրթությունում (2012):
   iii. Հարատև կրթություն (2012):
   iv. Ուղղահայաց շարժունություն (2012):
   v. Ուսանողակենտրոն ուսուցում (2012):
   vi. Ուսանողների մասնակցությունը բարձրագույն կրթության եվրոպական տարածաշրջանում (2012):
   vii. Սոցիալական հավասարությունը բարձրագույն կրթությունում (2012):
   viii. Ուսանողների ապագայի ֆինանսավորում (2013):
   ix. Հավասար հնարավորություններ բոլորի համար (2013):
   x. Որակ յալ կրթություն բոլորի համար (2013):
5. Bologna Seminar 2005: Bologna Seminar. 2005. Bologna Seminar on Doctoral Programmes for the European Knowledge Society. Conclusions and Recommendations.
6. Commission 2011: European Commission. 2011. Proposal for a regulation of the European Parliament and the Council on establishing «ERASMUS FOR ALL» The Union Programme for Education, Training, Youth and Sport.
7. Commission 2012: European Commission. 2012. 2012 Joint Report of the Council and the Commission on the implementation of the Strategic Framework for European cooperation in education and training (ET2020).
8. Communiqué 2001: The Prague communiqué 2001. Towards the European Higher Education Area. Communiqué of the Conference of Ministers responsible for Higher Education.
9. Communiqué 2005: The Bergen communiqué 2005. The European Higher Education Area, Achieving the Goals.
10. Communiqué 2007: The London communiqué 2007. Towards the European Higher Education Area: responding to challenges in a globalised world. Communiqué of the Conference of Ministers responsible for Higher Education.

11. Communiqué 2009: The Leuven/Louvain-la-Neuve communiqué 2009. The Bologna Process 2020—The European Higher Education Area in the new decade. Communiqué of the Conference of Ministers responsible for Higher Education.
12. Dalferth 2008: Dalferth, S. 2008. Quantitative Trends & Qualitative Aspects of Imbalanced Students & Staff Mobility.Conference in March 2008, Berlin.
13. Declaration 1998: Sorbonne Declaration 1998. Joint Declaration on Harmonization of the Architecture of the European Higher Education System.
14. Declaration 1999: Bologna Declaration 1999. Joint Declaration of the European Ministers of Education—The Bologna Declaration.
15. Declaration 1999: The Bologna Declaration of 19 June 1999. Joint Declaration of the European Ministers of Education.
16. EHEA Framework 2005: EHEA Framework of qualifications. 2005. The framework of qualifications for the European Higher Education Area.
17. ESN 2011: Alfranseder, E., Fellinger, J., Taivere, M. 2011. E-Valua-te Your Exchange. Erasmus Student Network, Brussels 2011.
18. ESU 2009: European Students' Union (ESU). 2009. Bologna With Student Eyes.
19. ESU 2012: European Students' Union (ESU). 2012. Bologna With Student Eyes.
20. ESU 2015: European Students' Union (ESU). 2015. Bologna With Student Eyes.
21. European Commission 2005: European Commission. 2005. ECTS Users' Guide.
22. European Commission 2009: European Commission. 2009. ECTS Users' Guide.
23. EURYDICE 2010: EURYDICE. 2010. Focus on Higher Education in Europe 2010. The Impact of the Bologna Process.
24. Sursock & Smidt 2010: Sursock, A. & Smidt, H. 2010. Trends 2010: A decade of change in European Higher Education.

Հավելվածներ

Հավելված 1. Ուսանողների իրազեկվածությունն իրենց բուհում բոլոնյան համակարգի առկայության վերաբերյալ (ըստ բուհերի և կրթական աստիճանների)

		Տեղյակ են	Տեղյակ չեն	Ընդամենը
Երևանի պետական համալսարան	*բակալավր*	175	110	
	մագիստրատուրա	15	8	
	ասպիրանտուրա	0	1	
		190	119	**309**
Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարան	*բակալավր*	129	35	
	մագիստրատուրա	22	2	
		151	37	**188**
Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան	*բակալավր*	52	7	
	մագիստրատուրա	6	0	
		58	7	**65**
Հայաստանի պետական ագրարային համալսարան /Վանաձորի մասնաճյուղ, Սիսիանի մասնաճյուղ/	*բակալավր*	6	7	
	մագիստրատուրա	1	0	
		7	7	**14**
Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա	*բակալավր*	13	4	
	մագիստրատուրա	1	0	
		14	4	**18**
Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ	*բակալավր*	14	3	
	մագիստրատուրա	2	0	
		16	3	**19**
Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան	*բակալավր*	20	33	

		Տեղյակ են	Տեղյակ չեն	Ընդամենը
	մագիստրատուրա	3	4	
	ասպիրանտուրա	0	1	
		23	38	**61**
Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարան	*բակալավր*	70	8	
	մագիստրատուրա	17	0	
	ասպիրանտուրա	16	0	
		103	8	**111**
Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա	*բակալավր*	21	1	
	մագիստրատուրա	11	0	
		32	1	**33**
Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան	*բակալավր*	120	12	
	մագիստրատուրա	6	1	
	ասպիրանտուրա	1	0	
		127	13	**140**
ՀՀ պետական կառավարման ակադեմիա	*բակալավր*	2	0	
	մագիստրատուրա	7	0	
	ասպիրանտուրա	1	0	
		10	0	**10**
Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ	*բակալավր*	34	4	
	մագիստրատուրա	9	0	
		43	4	**47**
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան	*բակալավր*	96	20	
	մագիստրատուրա	30	7	

		Տեղյակ են	Տեղյակ չեն	Ընդամենը
	Հարցվողի կրթական աստիճանը չի պարզվել	1	0	
		127	27	**154**
Վանաձորի պետական համալսարան	*բակալավր*	48	11	
		48	11	**59**
Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտ	*բակալավր*	65	16	
	մագիստրատուրա	25	10	
		90	26	**116**
Գորիսի պետական համալսարան	*բակալավր*	21	3	
	մագիստրատուրա	6	1	
		27	4	**31**
Գավառի պետական համալսարան	*բակալավր*	28	12	
	մագիստրատուրա	1	0	
		29	12	**41**
Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Վանաձորի մասնաճյուղ	*բակալավր*	8	0	
	մագիստրատուրա	1	0	
		9	0	**9**
Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Կապանի մասնաճյուղ	*բակալավր*	5	0	
		5	0	**5**
ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ	*բակալավր*	23	3	
	մագիստրատուրա	2	0	
		25	3	**28**
ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղ	*բակալավր*	12	2	
	մագիստրատուրա	1	0	
		13	2	**15**

		Տեղյակ են	Տեղյակ չեն	Ընդամենը
ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղ	*բակալավր*	2	0	
		2	0	**2**
ԵՊԿ Գյումրու մասնաճյուղ	*բակալավր*	3	0	
		3	0	**3**
ԵԹԿՊԻ Վանաձորի մասնաճյուղ	*բակալավր*	2	1	
		2	1	**3**
ԵԹԿՊԻ Գյումրու մասնաճյուղ	*բակալավր*	1	2	
		1	2	**3**
Հայաստանում ֆրանսիական համալսարան	*բակալավր*	11	4	
	մագիստրատուրա	2	0	
		13	4	**17**
Հայ - ռուսական սլավոնական համալսարան	*բակալավր*	39	4	
	մագիստրատուրա	4	1	
		43	5	**48**
Հայաստանի ամերիկյան համալսարան	*բակալավր*	2	7	
	մագիստրատուրա	8	4	
		10	11	**21**
Երևանի հյուսիսային համալսարան	*բակալավր*	81	32	
		81	32	**113**
Եվրասիա միջազգային համալսարան	*բակալավր*	33	4	
	մագիստրատուրա	3	0	
		35	4	**39**

Հավելված 2. Ուսանողների տեսակետները՝ Բոլոնյան համակարգի ազդեցության տարբեր ասպեկտների վերաբերյալ (%)

Հարց / Դատողություն	Տոկոս
Բոլոնյան համակարգն առավել պաշտպանված է դարձնում ուսանողին / լսելի են ուսանողի խնդիրները, պահանջները, կարծիքները	
Այո, էականորեն ազդել է	30
Այո, մասամբ է ազդել	47
Ոչ, ազդեցություն չի ունեցել	13
Նախկինում էլ նման խնդիր չկար	4
Դժվարանում եմ պատասխանել	6
Բոլոնյան համակարգը թույլ է տալիս օբյեկտիվ գնահատել ուսանողների գիտելիքները	
Այո, էականորեն ազդել է	30
Այո, մասամբ է ազդել	41
Ոչ, ազդեցություն չի ունեցել	18
Նախկինում էլ նման խնդիր չկար	3
Դժվարանում եմ պատասխանել	7
Բոլոնյան համակարգի ներդրմամբ ՀՀ ստացված կրթությունը համապատասխանեցվել է միջազգային կրթական չափանիշներին	
Այո, էականորեն ազդել է	28
Այո, մասամբ է ազդել	37
Ոչ, ազդեցություն չի ունեցել	21
Նախկինում էլ նման խնդիր չկար	2
Դժվարանում եմ պատասխանել	13
Բոլոնյան համակարգում բարելավվել են ուսանող-դասախոս հարաբերությունները	
Այո, էականորեն ազդել է	26
Այո, մասամբ է ազդել	30
Ոչ, ազդեցություն չի ունեցել	25
Նախկինում էլ նման խնդիր չկար	12
Դժվարանում եմ պատասխանել	7
Բոլոնյան համակարգը նվազեցրել է կոռուպցիան բուհում	
Այո, էականորեն ազդել է	21
Այո, մասամբ է ազդել	25
Ոչ, ազդեցություն չի ունեցել	33
Նախկինում էլ նման խնդիր չկար	6

Հարց / Դատողություն	Տոկոս
Դժվարանում եմ պատասխանել	14
Բոլոնյան համակարգը խրախուսում է ուսանողի ակտիվությունը	
Այո, էականորեն ազդել է	48
Այո, մասամբ է ազդել	27
Ոչ, ազդեցություն չի ունեցել	13
Նախկինում էլ նման խնդիր չկար	3
Դժվարանում եմ պատասխանել	9
Բոլոնյան համակարգն ուսանողին դարձնում է առավել ինքնուրույն	
Այո, էականորեն ազդել է	42
Այո, մասամբ է ազդել	34
Ոչ, ազդեցություն չի ունեցել	13
Նախկինում էլ նման խնդիր չկար	4
Դժվարանում եմ պատասխանել	6
Բոլոնյան համակարգը խրախուսում է ուսանողների մրցակցությունը	
Այո, էականորեն ազդել է	47
Այո, մասամբ է ազդել	31
Ոչ, ազդեցություն չի ունեցել	11
Նախկինում էլ նման խնդիր չկար	3
Դժվարանում եմ պատասխանել	8

Հավելված 3. Բուհում առկա հնարավորությունները՝ դասավանդվող առարկաների ընտրության հարցում (տոկոս՝ ըստ բուհերի)

	Կա լայն հնարավորություն	Կա սահմանափակ հնարավորություն	Չկա որևէ հնարավորություն	դժվարանում եմ պատասխանել	Ընդամենը
ԵՊՀ	2	11	4	2	18
ՀՊՄՀ	2	5	2	2	11
ԵՊԼՀ	0	3	1	0	4
ՀՊԱՀ /Վանաձորի, Սիսիանի մասնաճյուղեր/	0	0	1	0	1
ԵԳՊԱ	0	1	0	0	1
ԵԹԿՊԻ	0	1	0	0	1
ՃՇՀԱՀ	0	1	2	0	4

	Կա լայն հնարավորություն	Կա սահմանափակ հնարավորություն	Չկա որևէ հնարավորություն	դժվարանում եմ պատասխանել	Ընդամենը
ԵՊԲՀ	1	2	3	0	6
ԵՊԿ	0	1	1	0	2
ՀՊՃՀ	0	3	4	1	8
ՀՀ ՊԿԱ	0	0	0	0	1
ՖԿՀՊԻ	0	1	2	0	3
ՀՊՏՀ	0	6	2	1	9
ՎՊՀ	0	2	1	0	3
ԳՊՄՀ	1	3	2	0	7
Գորիսի Պետական Համալսարան	0	1	1	0	2
Գավառի պետական համալսարան	0	0	2	0	2
ՀՊՃՀ Վանաձորի մասնաճյուղ	0	0	0	0	1
ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղ	0	0	0	0	0
ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ	0	1	0	0	2
ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղ	0	0	1	0	1
ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղ	0	0	0	0	0
ԵՊԿ Գյումրու մասնաճյուղ	0	0	0	0	0
ԵԹԿՊԻ Վանաձորի մասնաճյուղ	0	0	0	0	0
ԵԹԿՊԻ Գյումրու մասնաճյուղ	0	0	0	0	0
ՀՖՀ	0	0	1	0	1
ՀՌՀ	0	1	1	0	3
ՀԱՀ	0	0	0	0	1
Երևանի հյուսիսային համալսարան	1	2	2	2	7
Եվրասիա միջազգային համալսարան	1	1	0	0	2
Ընդամենը	10	46	33	11	100

Հավելված 4. Հարցազրուցավարների աշխատանքային թիմը բաղկացած է եղել հետևյալ անձանցից.

1. Արմինե Յարալովա
2. Գոհար Հովհաննիսյան
3. Անի Բաղդասարյան Արմենի
4. Երանուհի Մանուկ յան
5. Տիգրան Էլբակ յան
6. Գագիկ Սիմոնյան
7. Էրիկ Վարդանյան
8. Լառա Ալավերդյան
9. Տաթև Հակոբյան
10. Մերի Հայրապետյան
11. Անի Կարապետյան Մանվելի
12. Սաթե Ավետիսյան
13. Հայկանուշ Ներսիսյան
14. Լուսինե Դադալյան
15. Հայկազ Շահնազարյան
16. Դավիթ Կարապետյան
17. Դիանա Կարապետյան
18. Անահիտ Դանիելյան
19. Արփինե Հովսեփյան
20. Սերժ Ռուշանյան
21. Թագուհի Աբրահամյան
22. Հայկազ Շահնազարյան
23. Անրիետա Կարապետյան
24. Ռիմա Խառատյան
25. Նինել Ավետիսյան
26. Անի Պապիկ յան
27. Նելլի Հակոբյան
28. Արմինե Սուքիասյան
29. Անի Կարապետյան
30. Անի Բաղդասարյան Գագիկի
31. Ձաքարյան Հասմիկ
32. Եղիազարյան Սվետլանա
33. Ասատրյան Լիլիթ
34. Բաղդասարյան Սիրանուշ
35. Սալումյան Սառա

Բոլոնյան համակարգն ուսանողի աչքերով

Ուսումնասիրության զեկույց

ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ Printinfo
www.printinfo.am